

ԵՐԵՎԱՆԻ ՄԽԻԹԱՐ ՀԵՐԱՑՈՒ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ  
ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՊԱՇՏՈՆԱԹԵՐԹ

# ԱՊԱԳԱ ԲԺԻՇԿ

2013 ԹՎԱԿԱՆ N 11-12 (1287-1288) ՍԵՊՏԵՄԲԵՐ



# Բարի գալուստ, առաջին կուրսեցիներ

Ուրախությամբ ցանկանում ենք նշել, որ այսօրվանից դուք Մխիթար Չերացու անվան Երևանի պետական բժշկական համալսարանի ուսանող եք, որը միևնույն ժամանակ և՛ պատվավոր, և՛ պարտավորեցնող կոչում է:

Միջին առաջին կուրսեցիներ, այսուհետև դուք պետք է զինվեք տեսական և գործնական գիտելիքներով, որպեսզի ավարտելուց հետո մուտք գործեք կյանք՝ որպես իր ուժերին վստահ հմուտ մասնագետներ: Կյանքը պիտի տա գնահատականը ձեր ստացած գիտելիքների, իսկ ձեր հաջողությունները կարտացոլվեն մարդկանց ճակատագրերում:

Ես ավելի քան վստահ եմ, որ դուք չեք բավարարվի ընդունելության քննությունների ընթացքում շահած հաղթանակով, այլ կանեք ամեն ինչ, որպեսզի ավելի խորացնեք ձեր գիտելիքները, որոնք կօգնեն ձեզ հետագայում հաղթահարել բազում դժվարություններ:

Եզակի է բժշկի մասնագիտությունը. դուք լավ մասնագետ լինելուց բացի պետք է լինեք նաև մարդասեր՝ ահա այն հիմնական սկզբունքը, որը պետք է ուղղորդի ձեզ կյանքի դժվարին ուղիներում:

Ուրեմն հարգեք և կատարեք ձեզ տրվելիք բոլոր հանձնարարությունները: Համալսարանում սովորելը և բժշկի սուրբ կոչմանն արժանանալը դյուրին գործ չէ, դուք ընտրել եք դժվար, բայց չափազանց մարդասիրական մասնագիտություն: Մաղթում ենք ձեզ ուժ ու եռանդ, որպեսզի ուսման ընթացքում ձեռք բերեք բոլոր այն անհրաժեշտ ունակությունները, որոնցով հետագայում հնարավորություն կունենաք կատարել հիպոկրատյան երդման պատվիրանները:

Մ. Զ. ՆԱՐԻՄԱՆՅԱՆ  
ԵՊԲՀ ռեկտոր

## Ըստ ընդունելության քննությունների արդյունքների

### Ամենաբարձր մրցույթն այս տարի եղել է բժշկական համալսարանում

Ընդունելության քննությունների ավարտից հետո ԳԹԿ կենտրոնի տնօրեն Գ. Մելիքյանն ընդգծեց, որ թեև բուհերում աճել է թափուր տեղերի քանակը, սակայն թափուր տեղեր այս տարի չեն ու-

նեցել միայն Երևանի պետական բժշկական և տնտեսագիտական համալսարանները:

Բացի այդ նրա փոխանցմամբ ամենաբարձր մրցույթն այս տարի եղել է բժշկական համալսար-

անի բուժական ֆակուլտետում և տնտեսագիտական համալսարանում:

ԵՊԲՀ-ում դիմորդների թիվը եղել է 1092, ընդունվել է 888 դիմորդ:

### Մխիթար Չերացու անվան Երևանի պետական բժշկական համալսարանը չի բարձրացրել ուսման վարձաչափերը

Հանրապետությունում նորից ալիքվում են երիտասարդության կրքերը: Այս անգամ առիթը բուհերում 80-ից 200.000 դրամով վարձավճարի բարձրացումն է: Նշենք, որ այս մտահոգությունը չունեն

ներ ուսանողները, քանի որ Մխիթար Չերացու անվան Երևանի պետական բժշկական համալսարանը չի բարձրացրել ուսման վարձավճարի չափերը:

մեր ուսանողները, քանի որ Մխիթար Չերացու անվան Երևանի պետական բժշկական համալսարանը չի բարձրացրել ուսման վարձավճարի չափերը:

### Շրջաբերական՝ հասցեագրված ԲՈՒՀ-երի ռեկտորներին

ՀՀ կրթության և գիտության նախարար Արմեն Աշոտյանը շրջաբերական նամակով դիմել է Հայաստանի բարձրագույն ուսումնական հաստատությունների ռեկտորներին: Նախարարի նամակում մասնավորապես նշվում է. «ՀՀ բարձրագույն ուսումնական հաստատությունների նախապատրաստական բաժիններում սովորող սիրիահայ ուսանողների համար սահմանել ուսման վարձավճարի 50% զեղչ, իսկ բուհում սովորողների համար՝ ուսման վարձավճարի չափը սահմանել 2012-2013 ուստարվա համար ՀՀ քաղաքացիների համար սահմանված վարձավճարի չափով:

Սիրիայի բուհերից ՀՀ բուհեր տեղափոխվել ցանկացող սիրիահայ ուսանողների համար, եթե առարկայական տարբերությունները գերազանցում են 20 կրեդիտը, սահմանել առարկայական տարբերությունների հանձնման ժամկետ և նրանց հնարավորություն տալ ուսումնառությունը շարունակել այն կուրսից, որից նրանք տեղափոխվել են»:

#### ԱՊԱԿԱ ԲԺԻՇԿ

Գլխավոր խմբագիր  
ՍԵՂԱ ԽԱՉԱՏՈՒԻ ԹՈՌՈՍՅԱՆ  
Editor Seda KH. TOROSYAN

Թղթակից

ԷԼԼԱ ԱՍՄԱՐՅԱՆ

Անգլերեն նյութերի պատասխանատու

ԱՆԱՅԻՏ ՂԵՄՈՒՐՅԱՆ

Համակարգչային ձևավորումը

ԼԻԼԻԹ ՎԱՐԴԱՆՅԱՆԻ

Լրատվական գործունեություն իրականացող Երևանի Մխիթար Չերացու անվան պետական բժշկական համալսարանի պետական ոչ առևտրային կազմակերպություն

Թերթը գրանցված է ՀՀ արդարադատության նախարարությունում:

Գրանցման վկայական N 299: Տպագրվում է «ԼԵԳԱԼ ՊԼՅՈՒՄ» ՍՊԸ հրատարակչությունում

Հեռախոս՝ 060-62-12-46, 2-46,

E-mail: apagabzhishk@ysmu.am

Տպաքանակը՝ 500 օրինակ:

Անվճար



# Health Science

## Health Science-ը (գիտությունն առողջության մասին) Հայաստանում

Հարցազրույցը ԵՊԲՀ ռեկտոր Միքայել Նարինյանի հետ «Առողջության մասին գիտության» (Health Science), կանխարգելման, առողջ կենսակերպի, ամբուլատոր պոլիկլինիկական ծառայության և տեղեկատվական տեխնոլոգիաներում ստեղծագործ մոտեցման մասին է:

- Համաշխարհային գիտական տիրույթում գոյություն ունի մի հասկացություն, որը հայտնի է անգլերենով Health Science, բառացի թարգմանությամբ՝ «առողջության մասին գիտություն»: Ի՞նչ էք կարծում՝ հնարավո՞ր է ներդնել այդ գիտությունը Հայաստանում, և ի՞նչ տերմինով այն կսահմանվի:

Երբ մենք ներդնում էինք ընտանեկան բժշկությունը Հայաստանում, դա նոր մոտեցում էր և հանդես էր գալիս որպես Family Medicine և General Practice բաղադրիչների համադրում՝ Primary Health Care՝ եկած արևմտյան երկրներից: Family Medicine-ը թարգմանեցինք՝ «ընտանեկան բժշկություն». դա շատերի

բժշկի առկայությունն ու վարձատրությունը (մինչդեռ դա ամենևին էլ այդպես չէ), ըստ այդմ՝ հետաքրքրությունը միանգամից սառեց: Իսկ General Practice-ը հայերենով ստացվում է «ընդհանուր բժշկական պրակտիկա», որը նույնպես անհասկանալի է մասնագիտություն կոչվելու տեսանկյունից: Անդրադարձանք նաև Primary Health Care-ին, թարգմանաբար՝ «Առաջնային բուժօգնություն»: Վերջինս նույնպես բավականին սահմանափակ բնորոշում թվաց: Ի վերջո, սահմանումն ավելի ընդլայնվեց՝ դառնալով «Առողջության առաջնային պահպանում», որը ցույց է տալիս առողջության պահպանումը՝ որպես առաջնայնություն և մասնագիտական գործունեություն: Ընդ որում, առաջնային բառն այստեղ մատնանշում է ծավալն ու խորությունը, այն ընդգրկում է ողջ նախահիվանդանոցային և հետհիվանդանոցային աշխատանքի ծավալը պացիենտի հետ: Իսկ այս կետից և այս հիմքի վրա վստահորեն կարելի է ներթափանցել Health Science եզր:

- Իսկ կանխարգելումը (պրոֆիլակտիկա) ի՞նչ դեր ունի այս հասկացության մեջ:

- Կանխարգելումը գտնվում է կենտրոնական դերում: Այս կոն-



- Health Science հասկացությունը շատ լուրջ բովանդակություն ունի: մոտ կարծիք ձևավորեց, որ ընտանիքն է ապահովելու ընտանեկան

տեքստում կարևոր է նշել նաև, թե ինչով է տարբերվում գիտությունը ծառայությունից. այն տարբերվում է ստեղծագործ ցանկություններով և նոտեցումներով, երբ հետազոտողը որոնում է որևէ պոտենցիալ խնդիր: Բժիշկն աշխատում է առկա խնդրի հետ, քանի որ մարդը դիմում է նրան արդեն իսկ ձևավորված առողջական խնդրով: Իսկ հետազոտողը պետք է փնտրի այդ խնդրի ակունքներն առողջ մարդկանց մեջ. դա կոչվում է ինտերվենցիա դեպի խնդիր:

Օրինակ, ես արդեն 30 տարի է՝ զբաղվում եմ պրակտիկ թոքաբանությամբ. ինձ դիմում են մարդիկ, ում մոտ առկա է քրոնիկական բրոն-

ուսի սննդի հիգիենա, աշխատանքի հիգիենա, սեռական կյանքի հիգիենա, շարժման հիգիենա և այլն: Եվ այս ամենի հիմքում ընկած է առողջությունը:

Ախտաբանական անատոմիան, ինչպես գիտենք, ախտորոշում և հետազոտություններ է կատարում դիակի մահացած հյուսվածքների մակարդակով, այն գտնվում է կյանքի մյուս եզրին և այնտեղ է ծավալում բժշկական պրակտիկա: Ընդ որում, հիշենք՝ երբ միջնադարում սկսվեց դիախեթման կիրառումը, դա համարվեց մի ուրույն հեղափոխություն բժշկագիտության զարգացման մեջ, անասելի խորացան բժշկական գի-



խիտ, ասթմա, թոքաբորբ կամ, ավելի վատթար տարբերակով, խորը թոք-սրտային անբավարարություն: Նրանցից յուրաքանչյուրի համար ես ունեմ մեկական ախտորոշում: Բայց չէ՞ որ հիվանդությունը ձևավորվել է ժամանակի ընթացքում, ինչ-ինչ պայմաններում և պատճառներով, օրինակ՝ ծխելու արդյունքում: Մինչև հիվանդության ձևավորումը նա չի ունեցել բրոնխիտ. նա եղել է պարզապես ծխելու սովորություն ունեցող մարդ: Ծխող մարդու մոտիվացիան, ծխել սկսելու և սովորությունը պահպանելու պայմանները, ծխելը թողնելու դժվարությունները և այլ նմանատիպ հանգամանքները, որոնք կանխարգելման սահմաններում են, պետք է ուսումնասիրի և պարզորոշի Health Science-ը:

**- Ի՞նչ կասեք «հիգիենա» հասկացության մասին՝ որպես Health Science-ի բաղկացուցիչ մաս:**

- Հիգիենան լայնածավալ գիտություն է, այն ընդգրկվում է ամենատարբեր ոլորտներում: Գոյություն

տեղիքները: Եվ ահա ակադեմիկոս Դավիդովսկին, ով բարձրաստիճան մասնագետ է հենց ախտաբանական անատոմիայում, բնորոշել է հիգիենան՝ որպես «առողջության պատճառագիտության մասին գիտություն»: Սա շատ դիպուկ նկարագիր է՝ ինչպես և ինչ անել առողջ լինելու համար: Այսինքն՝ Health Science-ը, իր մեջ պարունակելով հիգիենայի դրույթներ, պատասխանում է հետևյալ ամենակարևոր հարցերին՝ ինչպե՞ս լինել առողջ, ինչպե՞ս մնալ առողջ, ինչպե՞ս դառնալ առողջ և ինչպե՞ս վերադարձնել առողջությունը:

**- Կարո՞ղ ենք պնդել, որ այդ հարցերի հետ սերտորեն կապված է նաև առողջ ապրելակերպն առհասարակ:**

- Անպայման: Ընդ որում, կենսակերպ վարելը մարդկանց մոտ սովորաբար ասոցացվում է հետևյալ հաստատման հետ՝ պետք է չծխել, չխմել, ավելորդ քաշ չունենալ և լինել շարժուն: Մինչդեռ նման մարդու դեպքում էլ կարող է որևէ հիվանդություն

ծագել լրիվ անսպասելիորեն: Եվ նրանց մոտ, ովքեր թերագնահատում են բժշկության և բժշկագիտության դերը, հարց է առաջանում ինչպե՞ս կարող էր հիվանդանալ մի մարդ, ով չուներ վնասակար սովորություններ և ակտիվ կենսակերպ էր վարում. տպավորություն է առաջանում, որ այդ ամենն իզուր էր: Բայց նրանք անտեսում են այն հանգամանքը, որ հնարավոր է զարգանում է մի հիվանդություն, որը ժամանակին չի հայտնաբերվել, որը չի ենթարկվում վերը նշված «առողջ ապրելակերպին» և կարող է ունենալ այլ պատճառներ, օրինակ՝ ժառանգական: Հետևաբար՝ ընտանեկան բժիշկը պարտադիր պետք է ծանոթանա ընտանիքի գենոտիպին և, ըստ այդմ, ուշադիր լինի ֆենոտիպի նկատմամբ: Իսկ ֆենոտիպն այն է, ինչ կյանքն ու կենսակերպն «անում են» գենոտիպի հետ:

**- Ի՞նչ մասնագիտացման բժիշկներ և այլ մասնագետներ պետք է ներառվեն «Առողջության մասին գիտություն» հասկացության մեջ:**

- Հարցը լուսաբանելու համար մի օրինակ դիտարկենք: Սրտամկանի ինֆարկտը լուրջ խնդիր է տվյալ անձի համար. նրա մոտ կարող է ձևավորվել դեպրեսիա, հոգեհուզական խնդիրներ՝ կապված անաշխատունակության, տրամադրության անկման, սեռական կյանքում և ֆիզիկական ակտիվության խնդիրների հետ: Ըստ այդմ՝ եթե այդ մարդու հետ աշխատում է հոգեբանը Health Science-ի շրջանակներում, ապա նա չի լուծում սրտաբանական ուղղվածության խնդիր, այլ օգնում է տվյալ անձին: Այսպիսով «Առողջության մասին գիտությունը» պետք է համախմբի այն մասնագետներին, ովքեր մոտենում են միևնույն խնդրին տարբեր ուղղություններով, պահպանում են միջմասնագիտական հաղորդակցություն: Սա նոր երևույթ է լինելու, այդ պատճառով էլ դեռ պետք է ձևավորվի շերտ առ շերտ:

Թե ինչ մասնագետներ են ներառվելու այս գիտության մեջ՝ կախված կլինի խնդիրներից, դրանց առաջացման մասին մեր ունեցած գիտելիքներից: Պետք են այն մասնագետները, ովքեր ուղղակիորեն և անուղղակիորեն առնչվում են այդ խնդիրների հետ: Եվս մեկ օրինակ բերենք. եթե կրկին անդրադառնանք քրոնիկական բրոնխիտին, ապա պարզ է, որ առաջացման հարցում մեծ նշանակություն ունի ծխելը, օդի աղ-

տոտվածությունը: Կա մի եզրակացություն, ըստ որի քրոնիկական բրոնխիտի առավել տարածված ձևի՝ քրոնիկական օբստրուկտիվ բրոնխիտի հիմքում ընկած է ատիպիկ էկոլոգիական բորբոքումը: Այստեղից հետևություն՝ եթե բորբոքումն էկոլոգիական է, իսկ բժիշկը շարունակում է դիտարկել այն որպես վարակային, ապա այդտեղ չարաշահվում է հակաբիոտիկների նշանակումը: Իսկ դա կարող է բերել յաթրոգենիայի խնդիր՝ առաջացած բժշկելու ընթացքում: Հետևաբար պարզ է, որ էկոլոգը՝ որպես մասնագետ, նույնպես կարող է ներառվել Health Science-ի մեջ՝ կախված կոնկրետ խնդրից:

**- Զարգացման ի՞նչ հնարավորություն ունի «Առողջության մասին գիտությունը» Հայաստանում:**

- Շատ մեծ հնարավորություններ և մեծ կարիք, քանի որ կան տարբեր ակնհայտ խնդիրներ, որոնք լուծում են պահանջում հենց այս գիտության շրջանակներում: Ամենավառ օրինակներից է ավելորդ քաշի խնդիրը Հայաստանում: Ավելորդ քաշի հետ կապված՝ առկա են մասնագրկերակային հիպերտոնիա, երկրորդ տիպի շաքարախտ, վիրաբուժական գործունեություն (բարիատրիկ վիրաբուժություն, լիպոսակցիա, աբդոմինոպլաստիկա), հոգեբանական բարդույթներ և հիպոդինամիա: Եթե այս խնդիրը դիտարկենք զուտ բժշկական տեսանկյունից, ապա պետք է շարժվել սննդաբանության ուղղությամբ: Մինչդեռ հայտնի է, որ ավելորդ քաշի, ինչպես նաև ծխելու, ալկոհոլային կախվածության հիմքում ընկած են մարդու հոգեհուզական վիճակն ու հոգեբանական բարդույթները: Վերջին հաստատումից կարող ենք ևս մեկ եզրակացության գալ՝ Health Science-ի շրջանակներում հոգեբաններն անհրաժեշտ են ցանկացած խնդրի պարագայում:

**- Հայաստանում գոյություն ունի ամբուլատոր պոլիկլինիկական ծառայություն հասկացությունը. կարո՞ղ են պոլիկլինիկաները որպես գործնական կիրառական հիմք ծառայել Հայաստանում Health Science-ի ներդրման համար:**

- 14 տարի առաջ ստեղծվեց ընտանեկան բժշկության ամբիոն, որը մեծ նախաձեռնություն է առողջապահության նախարարության կողմից: Սկսվեց շատ մեծ կրթական ծրագրի իրականացում, որի արդյունքում կրթվեց մոտ 1.200 առաջնային օղակի բժիշկ (general practitioner-ընդհանուր պրակտիկայի մասնագետ): Նպատակը բժիշկներին վերամասնագիտությամբ ապահովելն էր՝ որակյալ, առաջնային (նախա և հետիվանդանոցային) բուժօգնություն մատուցելու համար՝ անկախ պացիենտի տարիքից, սեռից և առ-

կա խնդիրներից: Եթե խնդիրների շարքը հանենք հիվանդությունների շրջանակներից և դրանք ավելի լայնորեն ուսումնասիրենք, մեծ առաջընթաց կգրանցվի առողջապահական գիտությունների զարգացման գործում: Մոտ 1.200 մասնագետների վերամասնագիտացման մեջ ներգրավված էին բոլոր ամբիոնները: Կրթությունը տևեց 14 տարի: Դրա շարունակությունը պետք է լինի այն, որ հատկապես մարզերում կարճատև շարունակական բժշկական կրթության կուրսեր ներդրվեն՝ ընտանեկան բժշկությունը զարգացնելու համար: Ըստ իս՝ պարտադիր է, որ այս բոլոր գործունեությունները հիմնված լինեն գիտության կողմից հետազոտված, պարզորոշված և հաստատված փաստերի վրա:



**- Ինչպե՞ս եք վերաբերվում տարբեր ոլորտներում, մասնավորապես առողջապահության ու բժշկության զարգացման մեջ ինֆորմացիոն տեխնոլոգիաների (IT) և, առհասարակ, համացանցի դերին:**

- Այն պահից, երբ դարձա պատասխանատու ԵՊԲՀ-ում բազմաթիվ հարցերի համար, պարզ դարձավ, որ ինֆորմացիոն տեխնոլոգիաների գործոնը կարիք ունի ոչ միայն ակտիվացման, այլև որակի բարձրացման, ընդ որում՝ դրանով պետք է զբաղվեն համապատասխան մասնագետներ: Համակարգչի մոտ պետք է լինեն մարդիկ, ովքեր կգտնեն թիրախային կոնսիդենտը, կներբեռնեն նպատակային մասնագիտական տեղեկատվություն: Արդյունքում՝ մարդիկ ոչ միայն կընկալեն տեղադրված նյութը, այլև պահանջ կունենան էլի մտնելու կայք ու ստանալու մասնագետի կապը. կհայտնվեն հեղինակներ, կոլումնիստներ, գործընթացը կստանա ստեղծագործական բնույթ:

Աղբյուր՝ [Doctors.am](http://Doctors.am)

# Բժշկականի աշխարհի



Վերջերս Երևանի Մ.Ֆերացու անվան պետական բժշկական համալսարանում կայացավ օտարերկրացի ուսանողների ավարտական հանդիսությունը: ԵՊԲՀ-ի ավարտական դիպլոմ էին ստանում Իրանից, Չնդկաստանից, Ամերիկայի Միացյալ Նահանգներից, Սիրիայից, Շրի Լանկայից, Վրաստանից, Ռուսաստանի Դաշնությունից, Ղազախստանից, Իսրայելից, Լիբանանից, Իրաքից 101 շրջանավարտներ:

Միջոցառմանը մասնակցում էին հիշյալ երկրների, դեսպանատների և հյուպատոսությունների ներկայացուցիչներ:

Շրջանավարտներին շնորհավորեց ԵՊԲՀ ռեկտոր, պրոֆեսոր Միքայել Նարինյանը, նշելով՝ «Միրելի՛ շրջանավարտներ, շնորհավորում եմ ձեզ այս գեղեցիկ օրվա կապակցությամբ: Այսօր ավարտվեց ձեր կյանքի դժվարին շրջաններից մեկը, շրջան, որ ձեզ շատ բան տվեց: Բայց այսքանով չի սահմանափակվում ձեր կրթությունը, քանի որ բժիշկը մշտապես պետք է ինքնակրթվի: Մաղթում եմ ձեզ հաջողություններ ողջ կյանքի ընթացքում»:


Շրջանավարտներին շնորհավորեց նաև ԵՊԲՀ օտարերկրացիների ուսուցման ֆակուլտետի ղեկան, դոցենտ Աննա Սարգսյանը. «Միրելի՛ շրջանավարտներ, դուք անցաք երկար ճանապարհ և հասաք ձեր նպատակին: ԵՊԲՀ-ում դուք ստացաք ձեր երազած մասնագիտությունը և այժմ, երբ վերադառնաք ձեր երկրները, պետք է օգտագործեք այն գիտելիքները, որ ձեռք եք բերել ուսումնառության ընթացքում»:

Այս վեց տարիների ընթացքում դուք դարձաք մեզանից մեկը և համալրեցիք ԵՊԲՀ շրջանավարտների բանակը: Մեկ անգամ ևս շնորհավորում եմ ձեզ և մաղթում նորամտոր հաջողություններ»:

Այնուհետև նա ներկայացրեց այն ուսանողներին, ովքեր պետական ավարտական ատեստավորման բանավոր քննության ընթացքում լավ արդյունքներ են ցուցաբերել՝ Սպորվա Նիզամը (Չնդկաստանի Չանրապետություն), Ռենու Ռանան (Չնդկաստանի Չանրապետություն), Սուդիպ Սինգ Բադանան (Չնդկաստանի Չանրապետություն), Արման Տահմասբին (Իրանի Իսլամական Չանրապետություն), Վահե



# Հրջանավարտները միջօրեականներում



Պետրոսյանը (Ամերիկայի Միացյալ Նահանգներ), Ֆարզին Շահրոխ Ջադեն (Իրանի Իսլամական Հանրապետություն), Արամե Մուսախանյանը (Իրանի Իսլամական Հանրապետություն), Անի Պողոսյանը (Ամերիկայի Միացյալ Նահանգներ), Նաստարան Մոշանեզադը (Իրանի Իսլամական Հանրապետություն):

Շնորհավորելով շրջանավարտներին միջազգային գործունեության և արտաքին կապերի գծով պրոռեկտոր դոցենտ Երվանդ Սահակյանը ասաց. «Հասել է ամենակարևոր պահը, այն պահը, որն ուղեցույց է լինելու ձեզ ողջ կյանքի համար: Այժմ դուք կարտասանեք Հիպոկրատի երդումը, և հուսով եմ, որ կկատարեք նրա պատգամը ձեր մասնագիտական գործունեության ողջ ընթացքում»:

Այնուհետև մեծ բժշկապետի երդումը հայերեն լեզվով կարդալու համար նա բեմ հրավիրեց մեր համալսարանի հնդիկ շրջանավարտ Ռեմու Ռամային:

Երդման արարողությունից հետո շրջանավարտներ Արման Տահմասբին (Իրանի Իսլամական Հանրապետություն), Դուրգարյան Ամայակը (Վրաստանի Հանրապետություն), Պարիսա Հաբիբին (Իրանի Իսլամական Հանրապետություն), Նիտին Կումար Չաուհանը (Հնդկաստանի Հանրապետություն) ելույթ ունեցան և շնորհակալություն հայտնեցին ԵՊԲՀ ղեկավարությանը և պրոֆեսորադասախոսական կազմին՝ այս տարիների ընթացքում իրենց հանդեպ ցուցաբերած ջերմ վերաբերմունքի և ստացած գիտելիքների համար:

Միջոցառումն անցավ ջերմ մթնոլորտում և ավարտվեց շրջանավարտների ուժերով պատրաստված տոնական համերգով:

# Բարի ճանապարհ, շրջանավարտ- 2013



... Խորհուրդ են տալիս մասնագիտական գործունեության ողջ ընթացքում կատարելագործվել:

Մ. Զ. ՆԱՐԻՍԱՆՅԱՆ

Անցած ուսումնական տարվա ավարտին «Արամ Խաչատրյան» համերգասրահում տեղի ունեցավ Երևանի Մխիթար Չերացու անվան պետական բժշկական համալսարանի գիտական խորհրդի հանդիսավոր նիստը, որի ընթացքում հանդիսավոր պայմաններում դիպլոմներ հանձնվեցին 2013-ի շրջանավարտներին:

Շրջանավարտներին շնորհավորեց և Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Բ-ի օրհնությունը փոխանցեց Տեր սրբազան Արշակը. «Ինձ համար մեծ ուրախություն է և պատիվ կրկին գտնվելու բժշկական համալսարանի ավարտահանդեսին: Փոխանցում եմ ձեզ Վեհափառ Հայրապետի ողջույնը և օրհնությունը:

Վստահ եմ, որ ձեր մասնագիտական գործունեության ընթացքում դուք բազմաթիվ կյանքեր կփրկեք և շատ ընտանիքներ կերջանկացնեք»:

Օրհնելով ապագա բժիշկների մեծ առաքելությունը՝ սրբազանն աղոթեց և մաղթեց նրանց բարի երթ:

Շրջանավարտներին հանդիսավոր օրվա կապակցությամբ շնորհավորեց ԵՊԲԶ ռեկտոր, պրոֆեսոր Միքայել Նարինյանը:

«Սիրելի երիտասարդ գործընկերներ, տարիներ առաջ դուք ընտրեցիք բժշկությունը որպես ապագա մասնագիտություն: Անցան ուսման դժվար և միաժամանակ ուրախ տարիները, և այժմ մենք պատիվ ունենք շնորհելու ձեզ բժշկի որակավորում: Ի սրտե շնորհավորում եմ ձեզ, մաղթում եմ լինել առողջ և ամուր: Խորհուրդ եմ տալիս մասնագիտական գործունեության ողջ ընթացքում կատարելագործվել: Հիշեք՝ հաջողությունը ընտրում է պատրաստվածներին»:

Այնուհետև միջոցառման ժամանակ ՀՀ առողջապահության նախարար Դերենիկ Դումանյանի շնորհավորական ուղերձը փոխանցեց ՀՀ առողջապահության փոխնախարար Վահան Պողոսյանը. «Սիրելի շրջանավարտներ, դուք ավարտում եք մի բուհ, որն իր երկարամյա պատմության սկզբից մինչև այսօր անուրանալի ներդրում է ունենում մեր երկրի առողջապահական համակարգը

բժշկական բարձրորակ կադրերով ապահովելու գործում: Նշանավոր այս օրը ձեր շուրթերից հնչած երդումով կյանքի անչափ պատասխանատու մի փուլ է սկսվում: Միշտ հավատարիմ մնացեք ձեր երդմանը՝ բարձր պահելով մայր կրթօջախի անունն ու վարկը: Երբեք չմոռանաք, որ բժիշկը գործ ունի ոչ միայն մարդու առողջության, այլև նրա կյանքի հետ: Հետևաբար, որպես ամենամարդկային, ամենագթառատ մասնագիտության տեր՝ միշտ եղեք մարդկային վեհ և առաքինի արժեքների կրողը: Բարի երթ դեպի ձեր երազանքների իրականացում»:

Այնուհետև բուհի 441 շրջանավարտներ երգվեցին լինել Հիպոկրատի, Մխիթար Չերացու և այլ մեծանուն բժշկապետերի ավանդույթների արժանի հետևորդներ: Երդման արարողությունից հետո այն շրջանավարտներին, որոնք ուսման տարիներին ցուցաբերել են փայլուն առաջադիմություն, համալսարանի ռեկտորը հանձնեց առաջին կարգի (կարմիր) դիպլոմներ:

Միջոցառումը շարունակվեց համերգային ծրագրով, որն ապահովեց հյուրերի և մասնակիցների բարձր տրամադրությունը ողջ երեկոյի ընթացքում:



# Օրբիս Տաւաթի պատմութիւնն էս ընթացիկութիւնն էր



Հիպոկրատյան երդման  
տեքստը կարդաց Մխիթար  
Քերացու անվան կրթաթոշակառու  
Աճի Ռափյանը



# Քոչկականի շրջանափարի

Քո մասնագիտությունն այն եզակիներից է, որ գործունեությունդ սկսելուց առաջ պարտավոր ես երդվել զինվորի մնան: Այս հանգամանքն ընդգծում է մասնագիտությանդ կարևորությունը: Աշխարհում ընդունված է երդվել հիպոկրատյան երդմամբ: Ճիշտ է՝ այդ երդման որոշ տողեր այսօր թվում են ժամանակին ոչ համահունչ, այնուամենայնիվ հիմնական դրույթներն անփոփոխ են և հաստատուն:

Քեզանից առաջ երդվել են հազարավոր սերունդներ: Եկավ նաև քո երդման պահը: Դու երդվում ես որպես հայ բժիշկ՝ համամիտ լինելով նաև Հիպոկրատի երդման դրույթներին, որի առաջին պահանջն ամենակարևորն է՝ ՄԻ՝ ՎՆԱՍԻՐ:

Ս. Թ.

## Հիպոկրատի երդումը

Երդվում եմ բժշկության աստված Ապոլլոնի, ամողջության հովանավոր Ասկլեպիոսի և այլ աստվածների ու դիցուհիների անունով՝ նրանց վկայակոչելով, որ ես կկատարեմ այս երդումը եւ գրավոր պարտականությունը, որքան ներեն ուժերս ու թելադրի խիղճս:

Բժշկության արվեստ ինձ սովորեցնող ուսուցչիս երդվում եմ պաշտել ծնողիս հետ հավասար, նրա հետ կիսել իմ ողջ կարողությունը ու հոգալ նրա կարիքները, նրա որդիներին համարել իմ եղբայրներս, եւ եթե նրանք կամենան, սովորեցնել բժշկական արվեստ անվարձահատույց եւ առանց գրավոր պայմանագրի: Իմ բոլոր գիտելիքները, դասախոսությունները եւ այլ դասավանդման եղանակները երդվում եմ հաղորդել իմ որդիներին ու նրանցից բացի ոչ ոքի:

Երդվում եմ օգնել հիվանդներին խղճիս համաձայն, որքան ներեն ուժերս՝ խուսափելով նրանց որեւէ վնաս կամ չարիք պատճառելուց:

Երդվում եմ երբեք ոչ ոքի չտալ մահաբեր թույն կամ աջակցել այդ գործում, ով էլ որ խնդրի այդ մասին: Երդվում եմ նույնպես երբեք չտալ կանանց վիժեցնող դեղամիջոց:

Երդվում եմ լինել բարոյապես մաքուր ու բարեպաշտ առօրյա կյանքում եւ արվեստիս մեջ:

Երդվում եմ երբեք հանձն չառնել կատարել վիրահատություն, նույնիսկ քառատուն՝ այն թողնելով այդ գործով զբաղվող արհեստավորներին:

Ինչ տուն էլ որ ես մտնեմ, երդվում եմ այդ անել միայն հիվանդի բարօրության համար, զերծ մնալով որեւէ անարդար գործից, սեռական կապերից կանանց կամ տղամարդկանց հետ, միեւնույն է՝ լինեն նրանք ազատ թե ստրուկ:

Ինչ էլ որ ես տեսնեմ կամ լսեմ իմ բժշկական գործունեության ընթացքում կամ նրանից դուրս, մասնավոր կյանքում, չպետք է հրապարակ հանվի, երդվում եմ լռության մատնել ու այն համարել սրբազան գաղտնիք:

Եթե այս երդումը ես բարեխղճորեն կատարեմ ու այն երբեք չդրժեմ, թող ինձ բաժին ընկնի երջանկություն կյանքում, հաջողություն արվեստիս մեջ, եւ մարդկանց հարգանքը հավիտյանս հավիտենից: Իսկ եթե ես դրժեմ երդումս, թող ինձ բաժին ընկնի դրա հակառակը:



## Հայ բժշկի երդումը

Ստանալով բժշկի բարձր ու պատվավոր կոչում և անցնելով բժշկական գործունեության, երդվում եմ՝

լինել Հիպոկրատի, Մխիթար Հերացու և այլ մեծանուն բժշկապետերի ավանդույթների արժանի հետևորդը,

բարեխղճորեն ու պատասխանատվությամբ կատարել մասնագիտական պարտականություններս,

անշահախնդրորեն օգնել հիվանդին, մեղմել նրա տառապանքները՝ անկախ նրա ազգությունից, քաղաքական հայացքներից, կրոնական դավանանքից,

չչարաշահել հիվանդի վստահությունը, պահպանել բժշկական գաղտնիքը,

պահպանել բժշկական մասնագիտական ավանդույթներն ու բարոյական սկզբունքները,

բժշկական գործունեության ընթացքում անհրաժեշտության դեպքում դիմել առավել փորձառու գործընկերների խորհրդին ու օգնությանը,

անգամ սպառնալիքի տակ ի չարը չգործադրել բժշկական գիտելիքներս:

Խոստանում եմ ողջ կյանքում հավատարիմ մնալ այս երդմանը:

## Քո ծոցաւեսրի համար, սիրելի շրջանավառ

Լավ բժիշկը պետք է փիլիսոփա լինի:

Բժշկի առաջին պարտականությունն է՝ չվնասել սեփական ձեռքերով, չխանգարել բնության բնական բուժիչ ազդեցությանը:

Բժիշկը բնության օգնականն է:  
**ԳԱԼԵՆ**

Բժշկից և մանկավարժից պահանջում են հրաշք, իսկ երբ այն կայանում է՝ ոչ-ոք չի զարմանում:

**ՄԱՐԻԱ ԷԲՆԵՐ-ԷՇԵՆԲԱՆՍ**

Ես չեմ բուժում, ես օգնում եմ հիվանդին՝ բուժվել:  
**Ս. ԿՈԼՊԱԿՈՎ**

Բավարար չէ միայն լինել բժիշկ, պետք է նաև օգնել

իմանալ:

**Բ. Բրեխտ**

Հնարավոր չէ բուժել մարմինը՝ չբուժելով հոգին:

**ՍՈԿՐԱՏԵՍ**

Բժշկի կոչումը կյանքից սովորելու և անընդհատ կատարելագործվելու կամքն է:

**ԻՊՈԼԻՏ ԴԱՎԻՊՎԱԿԻ**

Ոչ մի մասնագիտություն այդքան հոգեկան ապրումներ չի կլանում, որքան բժշկությունը:

**ԱՆՏՈՆ ՉԵՆՈՎ**

Ոչ միշտ է հիվանդի բուժումը բժշկի իշխանության տակ:

**ՕՎԻԴԻՈՒՄ**

# Հրաժեշտի խոսքեր մեծ



**ԱՆԻ ՌԱՓՅԱՆ**  
ընդհանուր բժշկության  
ֆակուլտետ  
**Մխիթար Հերացու**  
**անվան կրթաթոշակառու**

Այս պահին, երբ հետադարձ հայացքով նայում եմ այն ժամանակահատվածին, երբ դեռ նոր էի ընդունվել մեր ԲՈՒՀ, հիշում եմ, թե ինչպիսի ակնածանքով և ինչ-որ տեղ նաև բարի նախանձով էի վերաբերում այդ ժամանակների մեր լավագույն ուսանողներին, կարդում «ԱՊԱԳԱ ԲԺԻՇԿ» ամսաթերթում նրանց մասին գրված հոդվածները, նրանց մաղթանքները: Այնքան հեռու էին ինձ թվում նրանց հաջողություններն ու ձեռքբերումները: Հիմա, երբ ես եմ նույնպիսի հաջողությունների հասել՝ հանդիսանալով Մխիթար Հերացու անվան կրթաթոշակառու, տարբեր մրցույթներում ճանաչվելով լա-

վագույն ուսանող ու հաղթող, հասկանում եմ, որ գրածս կարդալով՝ նույնը կզգա նաև այն նորամուտ առաջին կուրսեցին, ով դեռ երկար ճանապարհի ունի անցնելու և լի է երազանքներով ու նպատակներով: Ես նրանց արտանց մաղթում եմ համբերատարություն, ուժ և որ ամենակարևորն է՝ հավատ իրենց իսկ ընտրած ուղու հանդեպ: Իմ փորձից կարող եմ ասել, որ հաջողության հասնելու գլխավոր նախապայմանը սեփական ունակությունների առավելագույնս դրսևորումն է: Պետք չէ երբևէ կոտրվել կամ հիասթափվել: Պետք է ուղղակի փորձել հաղթահարել դժվարությունները և պարզ ճակատով անցնել այս՝ շատ բարդ, բայց միևնույն ժամանակ պատվիր ճանապարհը:

Որպես հավելում՝ ուզում եմ հիշեցնել նորեկներին, որ չնռռանա ասլիվ ակտիվ ու հագեցած ուսանողական կյանքով: Ես ինքս առաջին կուրսից փորձել եմ հնարավորինս ակտիվ ու հետաքրքիր անցկացնել ուսանողական տարիներս, այժմ ուսանողական խորհրդարանի փոխնախագահն եմ: Այդ ամենն ինձ միմիայն օգնել են իմ զարգացման, կայացման, ինչպես նաև ինձ համար շատ թանկ ընկերների ձեռք բերման գործում:

*Now that I look back at the times when I had just entered our University, I remember the respect and the kind feelings I had when I was reading the articles written about the best students of YSMU, their greetings and speeches. The success and achievement they had seemed so unachievable and unattainable to me. Now that I have the same success having a scholarship named after Mkh. Heratsi, being the best student in different competitions and being a winner, I realize that reading this article the freshmen will have the same feelings that I once had. I wish them patience, strength, and which is the most important, faith in the path they have chosen. You shouldn't ever get disappointed, you simply need to overcome difficulties and go forward. As an addition I would like to remind you to spend your student years actively, full of energy, taking part in different social activities and events. I am the Deputy President of the Student Parliament. All these only helped me in my personal development as well as in acquiring my best friends.*

**ANI RAPYAN**



**ԱԼՅՈՇԱ ԹՈՐՈՅԱՆ**  
ընդհանուր բժշկության  
ֆակուլտետ  
**Ռուբեն Յոյանի**  
**անվան կրթաթոշակառու**

Ով ոտք է դնում բժշկի ուղի, պիտի օժտված լինի բարձր բարոյաէթիկական մարդկային որակով: Երիտասարդ բժիշկը ստիպված է լինում կյանքի երկու հիմնական քննություն բռնել՝ հաջողության փոր-

ձություն և անհաջողության փորձություն: Այդ փորձությունների հանդեպ կայունությունը կախված է մարդու անհատականությունից, համոզմունքից, մտավոր և բարոյական սկզբունքից: Սրանք այն մարդկային որակներն են, որոնցով պետք է օժտված լինի յուրաքանչյուր ոք, ով ընդունվում է ԵՊԲՀ:

Մեր համալսարանի առավելությունը կայանում է նրանում, որ բացի խորը գիտելիքներ տալուց, ուսանողի մեջ ձևավորվում և ամրապնդվում են մարդասիրություն, յուրաքանչյուրի մեջ հարազատին տեսնելու կարողություն:

Իմ նպատակասլացության և համառության շնորհիվ կարողացել եմ լավագույնս դրսևորել ինձ ուսումնառության տարիներին, որը անկասկած կլինի շարունակական:

*Whoever plans to become a doctor should have moral aesthetical values. Young doctor has to pass two main exams in his life: experience of success and experience of failure. The stability towards those experiences depends on the personality, mental anmoral principles. Those are the human values that each who enters YSMU should undoubtfully have.*

*One of the advantages of our University is that besides giving us deep knowledge, it forms in us humanism, sympathy and the ability of treating everyone like our close ones.*

*Due to my purposefulness and stubbornness I managed to display myself the best way I could which will be permanent by all means.*

**ALYOSHA TOROYAN**

# Ճամփաբաժանից առաջ



## ԷՄԻԼ ԱՎԵՏԻՍՅԱՆ ընդհանուր բժշկության ֆակուլտետ Արամ Փիրուզյանի անվան կրթաթոշակառու

Մարդու կյանքը պայմանականորեն կարելի է բաժանել շրջանների: Այդպիսիներից ամենանշանակալիներից մեկի ավարտի նախաշեմին ասիս է մենք ենք կանգնած՝ 2013թ. ԵՊԲՀ շրջանավարտներս: Հետապացրեց զգեստով յուրաքանչյուրս հնարավորություն ունի նորովի արժեւորելու անցած ճանապարհը, վերաիմաստավորելու ձեռք բերած գիտելիքներն ու ունակությունները, առավել հասուն դիտակետից վերլուծելու անցած յոթ տարիների ընթացքը: Կրթություն ստանալով տասնամյակների ավանդույթներ և բարի համբավ ունեցող երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարանում՝ մենք անգնահատելի գիտելիքներ ձեռք բերեցինք այս տարիների ընթացքում, ուսումնասիրեցինք ոչ միայն հիմնարար բժշկագիտությունն ու կլինիկական առարկաների լայնածավալ ներկայացված, այլև հաղորդ եղանք մասնագիտություններից ամենամարդասիրականի՝ բժշկության հոգևոր, բարոյական արժեքներին: "Per aspera ad astram", ասում է լատինական ասացվածքը: Ահա այդ քարքարոտ ճանապարհին անուրանալի է մեր դասախոսների դերը, ովքեր տարիների, իսկ ոմանք նաև տասնամյակների ընթացքում կուտակած գիտելիքները շրայլորեն փոխանցեցին մեզ: Վստահ են, որ լսարանում և հիվանդի մահճակալի մոտ ձեռք բերած մեր գիտելիքները բարի պտուղ են տալու և ծառայելու են կենսահաստատ նպատակների: Շնորհակալ են մեր ռեկտոր Միքայել Նարիմանյանին,

ուն բժշկական և մանկավարժական բարձրարժեք արվեստին պատիվ ունեի ծանոթ լինել դեռևս առաջին կուրսից: Շնորհակալ են պրոռեկտոր Սամվել Ավետիսյանին, ով իր խստապահանջությամբ և համակողմանի գիտելիքներով մշտապես խթան է եղել առավել նպատակասլաց և նախանձախնդիր լինելու ուսման մեջ: Երախտագիտության ծով զգացում ունեմ ընդհանուր բժշկության ֆակուլտետի դեկան Նուրե Շահվերդյանի նկատմամբ, ում հոգատար, անաչառ և օբյեկտիվ խիստ վերաբերմունքը ուսանողի հանդեպ զգացել են ոչ միայն որպես խմբի ավագ և ուսանողական ակտիվի անդամ, այլև որպես շարքային ուսանող: Մարդկային հարաբերությունների կառուցման կարևոր գործում անձնային հատկանիշներին առաջընթացի համար շնորհակալ են իմ հարազատ ուսանողական խորհրդարանին՝ իմ ավագ ընկեր Կարեն Ակոպյանի գլխավորությամբ: Ցանկանում են շնորհակալություն հայտնել նաև «ԱՊԱԳԱ ԲԺՇԿԻ» գլխավոր խմբագիր Սեդա Թորոսյանին: Ահա արդեն 2 տարի լինելով ԵՊԲՀ «ՍԵՂԻԿՈՒՄ» ուսանողական անսագրի գլխավոր խմբագիրը՝ մշտապես ստացել են մասնագիտական և մարդկային բարի ու արժեքավոր խորհուրդներ սիրելի Սեդա Խաչատուրովնայից:

Ցանկանում են առանձնահատուկ նշել ուսանողական խորհրդարանի դերն ուսանողի կյանքում: Այն կարևոր ասպարեզ է հասարակական ակտիվության, սեփական, երբեմն նույնիսկ քեզ անհայտ հատկանիշների բացահայտման համար: Համալսարան ընդունվելուց առաջ, եթե որևէ մեկն ինձ ասեր, որ ես ուսանողական տարիներիս կդառնամ բժշկական համալսարանի ուսանողական անսագրի գլխավոր խմբագիրը և կլինեմ Հայաստանի ժուռնալիստների միության անդամ, ես պարզապես կմտածեի, որ այդ մարդը կատակում է: Բայց արի ու տես, որ նոր միջավայրը, լավ մարդկանցով շրջապատված լինելը սեփական անձի նորովի բացահայտման պարարտ հող է հանդիսանում:

Կյանքը տոնային հանձնարարություն չի տալիս, միայն դասեր: Թող, որ այդ դասերի ընթացքը բոլորիս համար բարի և արգասաբեր լինի:

*A human life can be conditionally divided into some phases. Now we have reached one of those important phases- the 2013 YSMU graduates. Looking back, each of us has a chance to value the way passed newly, reestimating the gained knowledge and skills, and analyzing the duration of the seven years from a more , mature point. Studying at YSMU, we gained not only deep knowledge but also got to know one of the most humanistic specialties- the Medicine and its spiritual and moral values."Per aspera ad astram" says the Latin proverb. Thus, on this hazardous way, we greatly appreciate the role of our lecturers who generously passed their knowledge to us. I am so much thankful to our Rector M. Narimanyan who I had the honor to meet with starting from the first year. I am grateful to the Deputy Rector S.Avetisyan who was a stimulus for me with his demanding and great character. I have a strong sense of gratefulness to the Dean of General Medicine - Nune Shahverdyan whose strictness and objective attitude was felt right from the first meeting not only as the head of the group but also as an ordinary student. For building healthy human relations and for my personal development I am very thankful to my Students' Parliament, including my friend Karen Akopyan.*

*I would like to thank the chief editor of the "Apaga Bzhishk" Seda Torosyan. Being the chief editor of the students' newspaper "Medicus" for already 2 years, I always received not only professional but also kind and valuable advice by our dear Seda Khachaturovna. I would like to specially stress the role of the Students' Parliament in a student's life. It's an important sphere for revealing some personal, unknown characteristic features and for social activities as well. If, before becoming a student, anyone said that I would be the chief editor of the students' paper or a member of Journalists' Union, I would think that one is kidding. But as you can see, the new atmosphere and being surrounded with nice people make basis for discovering you in a new, nice way.*

EMIL AVETISYAN



**ԱՆՆԱ  
ԳԵՎՈՐԳՅԱՆ**  
ստոմատոլոգիական  
ֆակուլտետ  
**Մխիթար Գերացու  
անվան կրթաթոշակառու**

Անչափ ուրախ եմ ըն-  
ծեռված հնարավորության  
համար՝ հրաժեշտի  
խոսքս համալսարանին  
ասելու:

Բակալավրիատում ու-  
սանելու չորս տարիներն ինձ իսկապես շատ բան են  
տվել. թե բացառիկ լավ ընկերներ ու մարդկային որակ-  
ների, թե գիտելիքներ, թե բազում ծանոթություններ...  
Այս ընթացքը սովորեցրել է վերցնել լավն ու օրինակե-  
լին և, նկատելով բացերն ու թերությունները, փորձել  
սեփական ճանապարհին խուսափել դրանցից և ուժերի  
ներածին չափով նպաստել դրանց շտկմանը: Ուզում եմ  
շնորհակալությունս հայտնել բոլոր այն դասախոսնե-  
րին ( նաև նրանց, ովքեր ինձ չեն դասավանդել), ովքեր  
ոչ միայն մեզ լիարժեք մասնագիտական գիտելիքներ  
են տվել, այլև փայլել են մարդկային հարաբերություն-  
ներում դրսևորած արժանիքներով: Թող նման մարդիկ  
լինեն ոչ միայն ակնածանքի առիթ, այլև ոգևորեն մյուս-

ներին՝ հետևելու իրենց կենսաձևին:

Շնորհակալ եմ նրանց, ում հետ պատիվ եմ ունեցել  
չորս տարի ուսանելու, հատկապես իմ շատ սիրելի ու  
հարազատ 458 խմբին: Քննություն, հարցում, գերծան-  
րաբեռնված առօրյա...

Այս ամենը նպաստել են նաև լիարժեք և որակյալ ըն-  
կերության ձևավորմանը: Շնորհակալություն այն  
մարդկանց, ովքեր ջանք չեն խնայում համալսարանի  
զարգացման և առաջընթացի համար՝ հավատալով, որ  
իրենք կարող են շատ բան փոխել: Չեմ կարող չդիմել  
մեր այն ուսանողներին, ովքեր հաճախ են գանգատ-  
վում դասերի ծավալից, ժամանակի սղությունից, հոգ-  
նածությունից... Հավաստիացնում եմ, որ ցանկության  
դեպքում հնարավոր է համատեղել ամեն բան. պետք է  
պարզապես սրտանց ցանկանալ և հավատալ...

Եվ վերջում՝ ուզում եմ քաջալերել ու ոգևորել համալ-  
սարանականներին՝ հիշեցնելով, որ պետք է ջանք չխ-  
նայենք հոգատար, բարեխիղճ, սրտացավ, անկեղծ,  
մարդասեր լինելու համար, որպեսզի ոչ միայն կոչվենք,  
այլև լինենք բժիշկ:

Մենք ունենք Աստուծոց շնորհված բացառիկ հնարա-  
վորություն՝ օգնել մարդուն՝ տիեզերքի բարձրագույն  
արժեքին: Գնահատենք այն, ինչ ունենք ու ջանանք  
հնարավորինս արդյունավետ և արգասավոր լինել մեր  
կոչման մեջ:

Լուսավոր ճանապարհ եմ մտադրում բոլորիս...

*I am so much happy to express my words of farewell to my University. Studying 4 years in Bachelor's indeed gave me much, both excellent friends and perfect human qualities. Those years taught me to gain the best and noticing the minuses, try to correct them or avoid if possible. I would like to thank all those lecturers (also the ones that haven't taught me), who not only gave us professional knowledge but also were unique in their human qualities and values. Let those people be respectful by all of us and serve as an example for others. I am grateful to those who I studied with for 4 years, especially my dear group 458. Exams, quizzes, hard days...*

*All these resulted in acquiring close and life-long friends. Thanks to the people who do their best in the development and prospective of the University believing that they can change a lot.*

*I can't fail turning to those students of the University who always complain about the size of the classes, lack of time, being tired and so on. I assure you that if you really wish you can combine everything, you just need to believe. And finally I would like to inspire all the students reminding that you need to do your best to be a humanist, diligent, compassionate and an honest person for not only being called but BEING a doctor.*

*We have an exceptional chance from God to help a person- the utmost value of the space. Let's value what we have and be effective in our positions as much as we can.*

*I wish a bright way to all of us.*

**ANNA GEVORGYAN**

## NOMINAL SCHOLARSHIP

***If you want to be like them, start today***

The following nominal scholarships for 2013-14 academic year are defined for the students who have exceptional achievements in academic life, high social activities and proper behaviour.

1. MKhitar Heratsi scholarship - 3
2. Vahan Artsruni scholarship - 1
3. Hakob Hovhannisyanyan scholarship - 1
4. Levon Hovhannisyanyan scholarship - 1
5. Grigor Areshyan scholarship - 1

6. Ruben Yolyan scholarship - 1
7. Bardughimeous Fanarjyan scholarship - 1
8. Levon Orbeli scholarship - 1
9. Ruben Sevak scholarship - 1

For being an applicant for the competition, there are several criteria a student should meet. The students are allowed to the competition only by the recommendation of the class.

**ՄԱՐԻԱՄ ԱՆՏՈՆՅԱՆ**  
 դեղագիտության ֆակուլտետ  
 Լևոն Յովհաննիսյանի  
 անվան կրթաթոշակառու

Ողջունում եմ ձեզ, սիրելի բարեկամներ: Այսօրվա պես եմ հիշում տարիներ առաջվա մտորումներս մասնագիտության ընտրության հարցում, իսկ հիմա՝ կանգնած ուսանողական կյանքի վերջին աստիճանավանդակին, կարող եմ միայն երախտիքի խոսք ասել երևանի պետական բժշկական համալսարանի դասախոսաուսանողական կազմին: Խոսքս ուղղելով ուսանողական կորպուսին՝ ցանկանում եմ ասել, որ երբեք չգլանան և համառություն դրսևորեն ուսման մեջ՝ չմոռանալով, որ յուրաքանչյուր դժվար ճանապարհի վերջը արդյունավետ սկիզբ է, չվախենան առաջ շարժվելու մասնագիտության մեջ, բայց հետ չմնան բարոյականությունից, քանզի ավելի շատ հետ կգնան, քան առաջ: Իմ ուսանողական ճանապարհը նույնպես եղել է բավականին լեցուն դժվարություններով, բայց խոսքով չեմ կա-

I greet you dear friends. I remember like today the thoughts I had years ago concerning choosing of my profession. And now standing on the last step of the student life, I can only express my deep words of thanks to all the lecturers and students of the University. I address my words to the students of the University telling them to be persistent in their studies, not forgetting that at the end of each hard way there is an efficient beginning. Don't be scared of going forward in your profession, and not stay back in the moral values, as you may go back and not

րող ասել, թե ինչպիսի ճանաչողական հրճվանք և անասելի վայելք եմ ապրել համալսարանում անցկացրած տարիներին: Շնորհակալ եմ իմ շատ սիրելի ուսանողական խորհրդարանին, որն ուսանողական կյանքս լցրեց հիշարժան և անմոռանալի հուշերով, որտեղ ձեռք բերեցի բազում ընկերներ: Հատուկ շնորհակալություն եմ ուզում հայտնել համալսարանի դասախոսական կազմին, ովքեր ջանք ու եռանդ չեն խնայել բարձրակարգ կրթություն տալու մեզ, որի արդյունքում հանգիստ ենք, որ վաղը նույնպես լինելու ենք ապահով ձեռքերում:



forward. My student life has also been rather hard and full of difficulties but I can say how much pleasure I got from my studying process and how I enjoyed it. I am thankful to my beloved Students' Parliament which filled my student life with unmemorable events and where I made friends with such nice people. I especially thank my lecturers who did their best to give us high quality education and as a result we are sure we'll be in safe hands in future.

**MARIAM ANTONYAN**

# ԱՆՎԱՆԱԿԱՆ ԿՐԹԱԹՈՇԱԿ

## Նրանց նմանվելու համար պատրաստվիր այսօրվանից

Ուսումնառության մեջ բացառիկ արդյունքներ ցուցաբերած, հասարակական մեծ ակտիվություն ու պատշաճ վարքագիծ ունեցող ուսանողների համար համալսարանում 2013-14 ուսումնական տարվա համար սահմանվում են հետևյալ անվանական կրթաթոշակները՝

1. Մխիթար Հերացու անվան – 3 տեղ
2. Վահան Արծրունու անվան – 1 տեղ
3. Հակոբ Յովհաննիսյանի անվան – 1 տեղ
4. Լևոն Յովհաննիսյանի անվան – 1 տեղ
5. Գրիգոր Արեշյանի անվան – 1 տեղ
6. Ռուբեն Յոյանի անվան – 1 տեղ
7. Բարդուղիմեոս Ֆանարջյանի անվան – 1 տեղ
8. Լևոն Օրբելու անվան – 1 տեղ
9. Ռուբեն Սևակի անվան (նախատեսված է սփյուռքահայ ուսանողների համար) – 1 տեղ

Անվանական կրթաթոշակի հավակնորդների մրցույթի համար սահմանվում են հետևյալ չափորոշիչները՝ բա-

ցարձակ գերազանց առաջադիմություն (քննական առարկաների գնահատականների ընդհանուր գումարը), տպագրված գիտական աշխատանքներ՝ կատարված ամբիոնի պլանային գիտական աշխատանքների շրջանակում, օտար լեզվի իմացություն (մրցույթին թույլատրվում են միայն ուսանողները, ովքեր օտար լեզվի քննությունից ստացել են 9 կամ 10 գնահատական), մասնակցություն առարկայական հանրապետական, միջազգային մրցույթներին, օլիմպիադաներին, ուսանողական գիտական նստաշրջաններին, մասնակցություն համալսարանի, ֆակուլտետների ուսանողական, հասարակական աշխատանքներին:

Ուսանողները թույլատրվում են մրցույթի միայն կուրսի երաշխավորությամբ:

# Միջոցառումներ, որ կայացան անցած

## ԵՊԲՀ բժիշկներն արժանացան «Հուստ աստղ» մրցանակի

«Արամ Խաչատրյան» համերգասրահում կայացավ «Տարվա լավագույն բժիշկ և բուժփնիմարկ»՝ «Հուստ աստղ» երկրորդ մրցանակաբաշխությունը՝ «Համագային վստահություն» խորհրդի կողմից:

Արժանիներին որոշելու համար հարցումներ էին անցկացվել բուժուղորտի մասնագետների և ազգաբնակչության շրջանում, որի արդյունքում «Հուստ աստղ» մրցանակին արժանացան նաև Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարանի աշխատակիցներ:

«Տարվա լավագույն ընդհանուր վիրաբույժ» անվանակարգում «Հուստ աստղ» մրցանակի արժանացավ ԵՊԲՀ վիրաբուժության թիվ 4 ամբիոնի վարիչի պաշտոնակատար, «Հերացի» թիվ 1 հիվանդանոցային համալիրի վիրաբուժության կլինիկայի ղեկավար, պրոֆեսոր Մուշեղ Միրիջանյանը:

«Լավագույն պլաստիկ վիրաբույժ» անվանակարգում «Հուստ աստղ» մրցանակի արժանացավ ԵՊԲՀ պլաստիկ վիրաբուժության ամբիոնի վարիչ, պլաստիկ վիրաբուժության և միկրովիրաբուժության կլինիկայի ղեկավար, դոցենտ Արտավազ Սահակյանը:

«Վնասվածքաբանության և օրթոպեդիայի բնագավառում նորագույն մեթոդների տարվա լավագույն ներդրող» անվանակարգում «Հուստ աստղ» մրցանակի արժա-

նացավ ԵՊԲՀ վնասվածքաբանության և օրթոպեդիայի ամբիոնի վարիչի պաշտոնակատար, պրոֆեսոր Արմեն Զարչյանը:

«Նյարդաբանության բնագավառում միջազգային չափանիշերի ապահովում» անվանակարգում «Հուստ աստղ» մրցանակի արժանացավ ԵՊԲՀ նյարդաբանության ամբիոնի վարիչի պաշտոնակատար, պրոֆեսոր Հովհաննես Մանվելյանը:

«Տարվա լավագույն մանկաբույժ» անվանակարգում «Հուստ աստղ» մրցանակի արժանացավ մանկական և նորածնային վերակենդանացման կլինիկայի ղեկավար, ՀՀ առողջապահության նախարարության գլխավոր նեոնաթոլոգ Հրանտ Կալենտերյանը:

«Սրտաբանության բնագավառում նորագույն մեթոդների կիրառման և զարգացման համար տարվա լավագույն սրտաբան» անվանակարգում «Հուստ աստղ» մրցանակի արժանացավ ԵՊԲՀ սիրտ-անոթային վիրաբուժության ամբիոնի ասիստենտ Շահեն Խաչատրյանը:

Միջոցառման նպատակն էր ներկայացնել և պատվի արժանացնել առողջապահության ոլորտում իրենց ձեռքբերումների ու եռանդի շնորհիվ ազգաբնակչության բարձր զնահատականին արժանացած լավագույն մասնագետներին ու կազմակերպություններին:

## ԵՊԲՀ «Մուրացան» հիվանդանոցային համալիրում նշվեց բուժաշխատողի օրը

«Մուրացան» հիվանդանոցային համալիրում հանդիսավորությամբ նշվեց բուժաշխատողի օրը, որի առիթով ԵՊԲՀ կլինիկական աշխատանքների գծով պրոռեկտոր, պրոֆեսոր Արմեն Մինասյանը բուհի ադմինիստրացիայի անունից շնորհավորեց բուժփնիմարկի անձնակազմին:

Տոնի առիթով պատվոգրերի արժանացան «Մուրացան» հիվանդանոցային համալիրի 7 աշխատակիցներ՝ մանկական և նորածնային վերակենդանացման կլինիկայի ղեկավար, ԵՊԲՀ նեոնաթոլոգիայի ամբիոնի ասիստենտ Հրանտ Կալենտերյանը, հիվանդանոցային համալիրի գլխավոր բժշկի բուժական գծով տեղակալ Կարմելա Պողոսյանը, մանկական վիրաբուժության կլինիկայի ղեկավար Ավետ Ասլանյանը, մանկաբուժության թիվ 1 կլինիկայի ղեկավար Կարինե Սիմոնյանը, մանկաբուժության թիվ 2 կլինիկայի ղեկավար, մանկաբուժության թիվ 1 ամբիոնի վարիչի պաշտոնակատար Նունե Բաղդասարյանը, անհետաձգելի բուժօգնության ծառայության ղեկավար Լիանա Նազարյանը, «Մուրացան» պոլիկլինիկայի ընտանեկան բժիշկ Աշխեն Սուխուրյանը:

Միջոցառման պաշտոնական մասին հաջորդեց տոնական հատվածը, որի ընթացքում ներկայացվեց «Մուրացան» հիվանդանոցային համալիրի աշխատակիցների

ուժերով պատրաստված «Անավարտ արվեստ» վերնագրով խորը փիլիսոփայական իմաստավորմամբ գեղեցիկ և հուզիչ մանրապատումը:



# ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԽԱՐՎԱ ԱՎԱՐՄԻՆ

## Դեղագործության մրցունակության 5-րդ միջազգային համաժողովը ԵՊԲՀ-ում

Դեղագործության մրցունակության 5-րդ միջազգային համաժողովը տեղի ունեցավ Երևանի Մ.Յերացու անվան պետական բժշկական համալսարանում, որը կազմակերպել էր Հայաստանի դեղարտադրողների և ներմուծողների միությունը՝ ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության «Ձեռնարկությունների զարգացման և շուկայի մրցունակության» («Ի-ԴԻ-ԷՄ-ՍԻ») ծրագրի և Արդյունաբերության զարգացման հիմնադրամի աջակցությամբ: Համաժողովին աջակցում էին նաև Երևանի պետական բժշկական համալսարանը, ՀՀ առողջապահության և էկոնոմիկայի նախարարությունները, դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոնը, զարգացման հայկական գործակալությունը:

Համաժողովի մասնակիցներին և հյուրերին ողջունեց ԵՊԲՀ ռեկտորը, նշելով՝ «Պատիվ ունեմ մեր համալսարանի անունից ողջունել ձեզ: Ուրախ եմ տեսնել մեր ընտանեկան բժիշկներին, որոնց ներկայությունը այստեղ երաշխիքն է այն բանի, որ մեր երկրում առաջնային բուժօգնության ներկայացուցիչները ներգրավված են դեղորայքի անվտանգ, արդյունավետ և մատչելի գործընթացում, ինչին նպաստելու է և այս համաժողովը»:

Իր ողջույնի խոսքում ՀՀ առողջապահության նախարար Դերենիկ Դումանյանը, ջերմորեն ողջունելով դեղագործության մրցունակության 5-րդ միջազգային համաժողովի մասնակիցներին՝ ասաց. «Ներկայացուցչական այս համաժողովը լուրջ նպատակներ է հետապնդում: Ինչպես գիտենք, մեր երկրում շրջանառվող դեղերի մինչև տասը տոկոսն է տեղական արտադրության: Մենք

ձեզ հետ միասին շատ անելիքներ ունենք ինչպես դեղարտադրության ընդլայնման, այնպես էլ պատշաճ արտադրական գործունեության պահանջների ապահովման գործում: Կարևորում են բոլոր այն համաժողովները, որոնք միտված են տվյալ ոլորտի միջազգային զարգացումներին համահունչ առաջընթացի ապահովմանը: Շնորհավորում են բոլորիդ՝ համաժողովի բացման կապակցությամբ և մաղթում արդյունավետ աշխատանք»:

Համաժողովի մասնակիցներին ողջունեց նաև ԱՄՆ միջազգային զարգացման գործակալության հայաստանյան գրասենյակի տնօրեն Քարեն Հիլիարդը: Նա ցավով նշեց, որ Հայաստանում շրջանառվող տեղական արտադրության դեղերի այդքան ցածր տոկոսը մտահոգիչ է, և ԱՄՆ միջազգային զարգացման գործակալությունը հնարավորինս կնպաստի այդ ցուցանիշի բարձրացմանը: «Մենք շարունակելու ենք մեր համագործակցությունը ոլորտի հետ՝ առկա գիտահետազոտական, շուկայավարման, կառավարման կարողությունները հզորացնելու նպատակով, ինչպես նաև Հայաստանի կառավարության հետ՝ անհրաժեշտ սերտիֆիկացման մեխանիզմներ մշակելու համար: Վստահ եմ, որ այս վեհաժողովը նոր կապերի, ձեռքբերումների հարթակ է լինելու»:

Համաժողովին զուգահեռ անցակցվեց դեղագործության ամենամյա «Ֆարմա Արմենիա Էքսպո» ցուցահանդեսը, որը տեղական և օտարերկրյա դեղագործական ընկերությունների և նրանց ներկայացուցիչների համար բացառիկ հնարավորություն էր՝ ներկայացնելու իրենց արտադրանքը և վերջին ձեռքբերումները:

## Կրթաթոշակներ գերմանական ակադեմիական փոխանակային ծառայության կողմից

Գերմանական ակադեմիական փոխանակային ծառայությունը (DAAD) 2013-14 ուսումնական տարվա համար հայտարարում է դրամաշնորհային ծրագրեր, որոնք նախատեսված են բարձր առաջադիմություն ցուցաբերած ուսանողների, բուհի շրջանավարտների, ասպիրանտների, դասախոսների, երիտասարդ մասնագետների և գիտնականների համար: Նախկին DAAD շրջանավարտները կարող են դիմել DAAD շրջանավարտների համար նախատեսված ծրագրին:

**Գ**իտահետազոտական կրթաթոշակներ ասպիրանտների և երիտասարդ գիտնականների համար:

**Բ**արձր առաջադիմություն ցուցաբերած ուսանողներին ամառային դասընթացներին մասնակցելու համար տրվող կրթաթոշակներ:

**Լ**րացուցիչ տեղեկություններ DAAD-ի գիտահետազոտական կրթաթոշակներ ծրագրի շրջանակներում բժշկագիտական առարկաների դիմորդների համար:

**Ա**րտասահմանցի ուսանողների խմբակային ճանապարհորդություններ Գերմանիա:

**Ո**ւսումնական կրթաթոշակներ բուհավարտների համար:

**Կ**րկնակի հրավերներ նախկին կրթաթոշակակիրների համար:

**Կրթաթոշակային ծրագրերի վերաբերյալ առավել մանրամասն տեղեկատվություն կարող եք ստանալ համալսարանական կայքից:**

# «Ֆոսֆոն» բժշկական կրթաթոշակի 10-ամյակը Բրյուսելի Բաց համալսարանում

Ամռան առաջին օրը Բրյուսելի Բաց համալսարանում մեծ շուքով նշվեց «Ֆոսֆոն» բժշկական կրթաթոշակի 10-ամյակը:

Բրյուսելի Բաց համալսարանը առաջարկում է շուրջ 40 ավարտական ծրագրեր՝ տարբեր երկրների ուսանողների և երիտասարդ մասնագետների համար: Առողջապահության բնագավառում, ի դեմս Erasme համալսարանական հիվանդանոցի, Բելգիայի Բաց համալսարանը սերտորեն համագործակցում է ինչպես Բելգիայի, այնպես էլ այլ երկրների բուժօգնությունների հետ:

Համալսարանի ավարտական ծրագրերի թվին է պատկանում «Ֆոսֆոն» կրթաթոշակի ծրագիրը, որում տարեցտարի ավելի մեծ թվով մասնակիցներ են ընդգրկվում: «Ֆոսֆոն» բժշկական կրթության աջակցման ֆոնդ է, որը բժշկական պրակտիկա անցնելու հնարավորություն է տալիս Եվրոպական Միության կազմում չընդգրկված երկրների ուսանողներին և երիտասարդ մասնագետներին: Այն իր գործունեությունը սկսել է դեռևս 1967-ից և համագործակցում է հետևյալ երկրների հետ՝ Ալժիր, Հայաստան, Կամերուն, Գաբոն, Լիբանան, Մարոկկո, Մոլդովա:

Համալսարանը մասնակիցների պրակտիկան կազմակերպում է համալսարանական Erasme հիվանդանոցում, որը ստեղծվել է 1977-ին և այժմ ամեն տարի իր 858 մահճակալային ֆոնդով ապահովում է 260.000 ամբուլատոր և 26.000 ստացիոնար հիվանդների բուժումը: Այն ակտիվ-

րեն համագործակցում է Բելգիայի և այլ երկրների բուժօգնությունների հետ և յուրաքանչյուր տարի ավելի քան 300 ուսանողներ և երիտասարդ մասնագետներ բժշկական

տոր, պրոֆեսոր Արմեն Մինասյանը: Այցելության ժամանակ վերահաստատվեց երկու համալսարանների միջև համագործակցությունը ոչ միայն շարունակելու, այլև դրա շրջա-



պրակտիկա են անցնում այս բազմապրոֆիլ հիվանդանոցում:

Միջոցառմանը մասնակցող պատվիրակությունների թվում էր նաև ԵՊԲՀ պատվիրակությունը, որը ղեկավարում էին ԱԺ առողջապահության, մայրության և մանկության հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ, մանկական վիրաբուժության ամբիոնի վարիչ, պրոֆեսոր Արա Բաբլոյանը և ԵՊԲՀ կլինիկական աշխատանքների գծով պրոռեկ-

նակները ընդլայնելու ցանկությունը: Կարևորելով այս ծրագրին մասնակցության համար ֆրանսերենի լավ իմացությունը՝ որոշվեց ԵՊԲՀ-ում կազմակերպել ֆրանսերեն լեզվի հատուկ դասընթացներ:

Միջոցառման ավարտին մեր պատվիրակությունը «Ֆոսֆոն» ծրագրի կազմակերպիչներին երախտիքի խոսք հղեց ԵՊԲՀ ռեկտոր, պրոֆեսոր Միքայել Նարիմանյանի և ԵՊԲՀ-ի կոլեկտիվի անունից, այնուհետև իրականացնելով ԵՊԲՀ գիտական խորհրդի որոշումը՝ «Մխիթար Յերացի» ոսկե մեդալներով պարգևատրվեցին Բրյուսելի Բաց համալսարանի բժշկության ֆակուլտետի դեկան, «Ֆոսֆոն» ծրագրի ադմինիստրատիվ աշխատանքների ղեկավար, պրոֆեսոր Իվոն Էնգլերթը և մանկաբուժության գծով հանձնաժողովի նախագահ, պրոֆեսոր Ժորժ Կազիմիրը:



## Celebrating Fosfom Medical Scholarship 10th anniversary at L'Université Libre de Bruxelles

L'Université Libre de Bruxelles solemnly celebrated Fosfom Medical Scholarship 10th anniversary on 31 May – 1 June of 2013.

L'Université Libre de Bruxelles, Belgium offers about 40 graduate programmes designed specifically for students and young specialists of various countries. It closely cooperates with both local and international medical institutions in the healthcare sector and “Erasme” institutional hospital plays an important role on this pathway. “Fosfom” is one of these graduate programmes and gradually gains wide acclaim among many specialists. It is a fund with a mandate to advance medical education and enable students and young specialists from countries not included in the European Union to undergo medical training. This fund was established in 1967 and since its inception it has cooperated with Algeria, Armenia, Cameroon, Gabon, Lebanon, Morocco and Moldova.

L'Université Libre de Bruxelles organises the training of participants at the Erasme institutional hospital (furnished with 858 beds), which was founded in 1977 and currently provides for 260.000 outpatient and 26.000 inpatient treatment planning annually. It is engaged in a sustained partnership with medical establishments of Belgium and foreign countries. Each year more than 300 students and young specialists undergo medical training in this multiprofile hospital.

The delegation of Yerevan State Medical University was among the delegations having arrived from different countries to attend this event. Armenian delegation was composed of Dr. Ara Babloyan, Professor, Head of YSMU Department of Pediatric Surgery, Chair, Standing Commission on Health Care, Maternity and Childhood of National Assembly; Dr. Armen Minasyan, Professor, Vice-Rector for YSMU Clinical Affairs, Dr. Hamayak Sisakyan, Head of YSMU Clinic of General and Invasive Cardiology, Professor, Head of YSMU Department of Emergency Cardiology; Dr. Nune Baghdasaryan, Head of YSMU Clinic of Pediatric N2, Associate Professor, Acting Head of YSMU Department of Pediatrics N1; Dr. Ashot Sargsyan, Professor, Acting Head of YSMU Department of Pediatrics N2.

Most importantly, the commitment to maintain and even further ongoing partnership between L'Université Libre de Bruxelles and Yerevan State Medical University was reiterated. While underscoring the importance of sound knowledge of French, it was also decided to organise language courses specifically designed to enable young specialists avail them of the Fosfom scholarship and participate in the programme.

Armenian delegation expressed its gratitude to the “Fosfom” programme management team during the ceremony not only on behalf of Prof. Mikayel Narimanyan, the University Rector, but also the university faculty and the participants engaged in the programme since 2008. In appreciation of their efforts unearthed through the programme, “Heratsi” gold medals were awarded to Yvon Englert, Dean of Faculty of Medicine of L'Université Libre de Bruxelles, Director of Fosfom Programme Administrative Affairs and Prof. Georges Casimir, Chair of Commission on Pediatrics at L'Université Libre de Bruxelles.

# ՈՒՂՂՈՒՄ

## Հայտարարվում է 2013-14 ուստարվա մագիստրատուրայի ընդունելություն

«ԱՊԱԳԱ ԲԺՇԿԻ» 2013 թվականի  
N 9-10 (1285-1286) թողարկման մեջ  
մագիստրատուրայի ընդունելության  
հայտարարության մեջ տեղ է գտել  
վրիպակ: Իրականում ընդունելության  
նր վերաբերող հայտարարությունը  
հետևյալն է.

ԵՊԲՀ բակալավրիատի շրջանավարտների  
համար դիմումներն ընդունվում են 2013 թ.  
հուլիսի 22-ից մինչև օգոստոսի 9-ը՝  
համապատասխան դեկանատներում:

Այլ բուհերի շրջանավարտների համար  
դիմումներն ընդունվում են 2013 թ. հուլիսի 1-ից  
մինչև 12-ը՝ ուսումնամեթոդական  
վարչությունում:

**Փորձնական համակարգչային քննության օրը՝  
22.07.13 թ., ժամը՝ 10:00:  
Ընդունելության միջառարկայական  
համակարգչային քննության օրը՝ 25.07.13 թ.,  
ժամը՝ 10:00:**

Այս մասին առավել մանրամասն՝  
համալսարանական կայք էջում:

...Երանի քեզ, հայ ուխտավոր,  
Որ կարոպով ու սիրառաս  
Ուխտ ես գնում դեպ Այրարատ:

# Վերելք՝

Ն. ԹՈՒՄԱՆՅԱՆ



Ուրախությամբ տեղեկացանք, որ 2013 թվականի օգոստոսի 6-ին ֆիզիկական դաստիարակության ամբիոնի դասախոս, ՀՀ սպորտի վարպետ, ավագ հրահանգիչ Մարտին Մարտիրոսյանը հաղթահարել է Արարատի լեռնագագաթը: Այս առթիվ նա սիրով կիսվեց իր տպավորություններով:

Մարդու կյանքում լինում են պահեր, երբ լեզուն կարծես անգորանում է մտքի թարգմանը լինելու ու արթնանում է հույզերի և զգացմունքների լեզուն:

Զգացողություններն անպատմելի են. այն զգալու համար պետք է ոտք դնել բաղձալի գագաթին ու վայելել հավերժության գաղափարը:

Դողուբայազետ հասանք երեկոյան, որտեղ և նախապատրաստվեցինք հաջորդ օրվա վերելքին:

Անցնելով 50 կիլոմետր՝ 2.200 մետր բարձրության վրա մեզ սպասում էին տեղացի քրդեր՝ ձիերով ծանր ուսապարկերը տեղափոխելու համար: Այդ օրը բարձրացանք մինչև առաջին ճամբար՝ 3.366 մետր բարձրության վրա: Հաջորդ օրը բարձրացանք երկրորդ ճամբար՝ 4200 մետր: Նույն օրը գիշերը սկսվեց վերելք դեպի լեռնագագաթ: Եղանակը սառն էր: Հասանք սառցադաշտին ժամը 6-ին: Այդտեղից երևում էին Արագածը, Գեղամա լեռնաշղթան, Սևանը...



## Բերկրիի ջրվեժը

# ԲԻԲԼԻԱԿԱՆ Արարատ

Հագնելով կատվիկներ, որպես փորձառու՝ միայնակ հաղթահարեցի լեռնագագաթը, առաջ անցնելով խմբի մյուս անդամներից:

Մեզ հետ զուգահեռ քայլում էին լեռնագնացներ այլ երկրներից: Գագաթում խաչակնքեցի՝ ըմբռնելով գագաթի վեհությունը...

Ինձ մոտեցան լեռնագնացներ Լեհաստանից. հասկացել էին հուզմունքս ու հայ լինելս: Ի զարմանս ինձ՝ ես լսեցի մի արտահայտություն. «Դուք բարձրացել եք ձեր սուրբ լեռը»:

Շուտով ինձ միացան նաև խմբի մյուս անդամները ու գագաթին ծածանվեցին եռագույն դրոշները, թնդաց հայոց հիմնը...


Գագաթին մոտ 40 րոպե մնալուց հետո սկսեցինք վայրէջքը: Հաջորդ օրը եղանք Վանա լճում, Աղթամար կղզում, ճաշակեցինք Վանա տառեխ, եղանք Վանի բերդում, Արծափ հայկական գյուղում, Ղարսում, հազար ու մի եկեղեցիների մայրաքաղաք Անիում... Ամեն ինչ այնքան տպավորիչ էր...

Արարատի վերելքից ստացած տպավորությունները մեզ փոխանցելով Մ. Մարտիրոսյանը նշեց, որ այս առիթով հատկապես ուրախ էին համալսարանի լեռնագնացների «ՀԱՏԻՍ» ակումբի հին ու նոր սաները, քանզի գիտեին իրենց ղեկավարի վաղեմի երազանքի մասին:

ԷԼԼԱ ԱՍՏՈՐՅԱՆ

Կուզեի նստել մի քարի վրա  
Եվ անվերջ նայել իմ Արարատին,  
Հարբել հայրենի միրաժով նրա  
Եվ հավերժ նայել իմ Արարատին:

Հ. ՇԻՐԱԶ



Արարատի ծեր կատարին դար է եկել, վայրկյանի պես ու անցել:  
Անհուն թվով կայծակների սուրն է բեկվել ադամանդին ու անցել:  
Մահախուճապ սերունդների աչքն է դիպել լույս գագաթին ու անցել:  
Հերթը հիմա քոնն է մի պահ. դու էլ նայիր սեզ ճակատին ու անցիր...

ԱՎ. ԻՍԱՀԱԿՅԱՆ

Արև դիպավ Մասիս սարին...

# Նրա սիրտը լեռներում էր...


## ՎԻԼՅԱՍ ՍԱՐՈՅԱՆ



*Ես Վիլյամ Սարոյանն եմ՝ Արմենակ  
և Թագուհի Սարոյանների չորրորդ գա-  
վակը... Ծնվել եմ Ֆրեզնոյում, բայց  
ծնողներս բիբլիսցի են... Յոգ չէ, թե  
մենք հայ հողից հեռու էինք ապրում,  
Հայաստանը մեր մեջ էր, Բիբլիսը մեր  
մեջ էր: Մենք էլ Բիբլիսի մեջ էինք մեր  
խոհերով, միատուկացով, հիշատակնե-  
րով: Երգում էինք մեր հին երգերը:  
Պատմում Բիբլիսի պատմությունները...*

Թեև անգլերեն եմ գրում, բայց ես ինձ  
համարում եմ հայ գրող: Գործածածս  
խոսքերն անգլերեն են, միջավայրը,  
որի մասին գրում եմ, ամերիկյան է:  
Սակայն այն ոգին, որ ստիպում է ինձ  
գրել՝ հայկական է: Ուրեմն՝ ես հայ  
գրող եմ:

**ՎԻԼՅԱՍ ՍԱՐՈՅԱՆ**



### Հատվածներ

#### «Մարդկային կատակերգություն» վեպի տարբեր գլուխներից

\* \* \*

Բարին երբեք չի մահանում: Եթե մահանար, աշ-  
խարհում մարդիկ գոյություն չէին ունենա, ոչ մի տեղ  
կյանք չէր լինի: Իսկ աշխարհը լեցուն է մարդկանցով  
և հրաշալի կյանքով:

\* \* \*

15 րոպե հետո հոնո Յոմեր Մաքուլին հեծանիվից իջավ  
մի մեծ, գեղեցիկ հին տան առջև: Այդ տանն ինչ-որ  
տոնախմբություն էր: Լուսամուտներից երևում էին  
պարող երիտասարդ զույգեր: Երբ տեսավ, որ հարկի  
տակ երջանկություն է տիրում, տղան վատ զգաց: Նա  
ուղղվեց դեպի դուռը և, մի պահ կանգնելով, ունկնդ-  
րեց ներսից եկող երաժշտությունը: Նրա մատը դո-  
ղաց դեռան զանգի վրա... հետո անգոր ցած ընկավ:

\* \* \*

Կարևոր չէ, թե ինչ սխալներ կգործես կյանքում, մի  
վախեցիր գործած սխալների համար կամ նորերը  
գործելուց: Դու բարի սիրտ ունես, վստահիր սրտիդ,  
ունկնդիր նրան և շարունակիր ճանապարհդ՝  
առանց կանգ առնելու: Եթե ընկնես՝ խաբված կամ  
հալածված ուրիշներից կամ ինքդ քեզանից, վեր  
կաց և հետ մի մայի: Բազմաթիվ անգամներ պիտի  
ծիծաղես և բազմաթիվ անգամներ պիտի լաց լինես,  
այդ ծիծաղն ու արտասուքը շարունակ անբաժան  
պիտի լինեն իրարից: Քո կյանքում դու ոչ մի րոպե  
իրավունք չես ունենա ստոր, նենգ կամ փոքրոգի լի-  
նելու:

Վիլյամ Սարոյանը 20-րդ դարի ամերիկյան գրականության  
ականավոր ներկայացուցիչներից է: Նրա ստեղծագործու-  
թյունները թարգմանվել ու թարգմանվում են աշխարհի բազ-  
մաթիվ լեզուներով:

Սարոյանը ծնվել է 1908 թ., Կալիֆոռնիայում՝ Բիբլիսից  
(Արևմտյան Հայաստան) գաղթած աշխատավոր հայ ընտա-  
նից: Վաղ հասակից էլ սկսել է աշխատել, եղել է լրագրա-  
վաճառ, հեռագրատան ցրիչ, սևագործ բանվոր, գրասենյա-  
կային ծառայող ու վարձու զինվոր...

1934 թ. լույս է տեսնում Սարոյանի «Խիզախ պատանին թռ-  
չող մարգածողերի վրա» վիպակը և միանգամից ճանաչում  
բերում երիտասարդ հեղինակին: Սարոյանը գրել է 1500-ից  
ավելի պատմվածքներ, բազմաթիվ վեպեր, վիպակներ, պի-  
եսներ:

Նրա ստեղծագործությունների հերոսները հասարակ մար-  
դիկ են, աշխատավորներ ու թափառաշրջիկներ, բատրակներ  
ու բանվորներ, մանր առևտրականներ ու ծառայողներ, որոնց  
կյանքը լի է դառնությամբ, կարիքով ու զրկանքով: Նրանք,  
սակայն, չեն հուսալքվում ու ընկրկում կյանքի դժվարություն-  
ների առաջ, այլ ամենածանր դրության մեջ էլ փայփայում են  
լավի հույսը, ամենամռայլ վիճակում՝ գտնում լույսի շողերը:  
Սարոյանի ստեղծագործությունները տոգորված են խոր մար-  
դասիրությամբ ու պայծառ լավատեսությամբ, հասարակ  
մարդու ճակատագրի, նրա ապագայի հանդեպ մտահոգու-  
թյամբ:

Սարոյանի շատ գործեր թարգմանված են հայերեն: Սարո-  
յանը շատ էր սիրում Հայաստանը, Երևանը: Նա մի քանի ան-  
գամ այցելել է իր նախնիների հայրենիքը, որը նաև իրենն էր  
համարում: Առաջին անգամ 1935-ին է եղել Երևանում: 25  
տարի անց՝ 1960-ին նա կրկին այցելել է և ուրախացած բա-  
ցականչել. «...Ինձ թվում էր, թե ընկել եմ մի ուրիշ աշխարհ:  
Զարգացումը մեծ է, հաջողություններն՝ անհամար»:

Վիլյամ Սարոյանը վախճանվեց ԱՄՆ-ի Ֆրեզնո քաղաքում,  
1981 թվականի մայիսի 18-ին: Նրա կտակի համաձայն աճյու-  
նի մի մասը բերվել է Հայաստան և թաղվել Երևանում՝ Կոմի-  
տասի անվան պանթեոնում:

## Հայ մեծերը Վիլյամ Սարոյանի մասին

Ես լիապես երջանիկ մարդ եմ համարում Սարոյանին: Անընդհատ զարմանալու ընդունակությամբ է օժտված այդ մարդը: Երջանիկ է այն մարդը, ով տարիքն առնելու հետ չի կորցնում զարմանալու ընդունակությունը: Սարոյանը հենց այդ մարդկանցից է, ուղղակի մեծ երեխա է և այն էլ՝ հանճարեղ:

**ՄԱՐՏԻՐՈՍ ՄԱՐՅԱՆ**

Սարոյանն օժտված է մի այնպիսի ծիրքով, որ շատ քչերն են ունենում՝ մարդկանց սիրելու դժվարագույն տաղանդով: Նա մարդկանց չի դատապարտում, այլ սիրում է նրանց...

Նրա բնավորության ամենաբնորոշ գիծը բարությունն է:

...Նրա երկերը լեցուն են հազար ու մի զրկանքներով, և նրա հերոսները հազար ու մի դժվարություն են կրում: Բայց այդ ամենը ջերմացած են սրտի մի այնպիսի կրակով, որ ապրել են ուզում, ոչ թե մեռնել, փառաբանում են կյանքը և ոչ թե անհիծում... Սարոյանը հավատում է աշխարհի ու մարդկանց լավացմանը: Այդպիսին է Սարոյանը:

**ՊԱՐՈՒՅՐ ՍԵՎԱԿ**

... Մեծացավ Սարոյանը Արևմուտքի գրականության ջունգլիներում՝ խլելով բնությունից իրեն սահմանված փառքի մեծ բաժինը, հպարտ և տիրական, մեծաքանքար և կորովի անցավ աշխարհի սրտի միջով՝ մնալով միշտ մարդ, միշտ Վիլյամ, մնալով, մանավանդ, միշտ Սարոյան:

Դժվարին մանկություն և նույնքան դժվարին պատանեկություն:

Խորն է զգացել կյանքի հակասությունները և դժվարությունները, բայց այդ ծանրությունը նա տարել է միշտ լավատեսորեն, ժպիտով, գրեթե մանկական անմիջականությամբ, միշտ իրական կյանքում լավը որոնելու և անպայման գտնելու ցանկությամբ, տառապող հոգու մակընթացություններով և տեղատվություններով:

**ԳՈՒՐԳԵՆ ՄԱՅԱՐԻ**

**Ամերիկյան ժամանակակից արձակի  
հսկաների՝ Յեմինգուեյի, Ֆոլքների, Ռոթի,  
Վոննեգուտի անունների կողքին նա  
հնչեցրեց հայկական Սարոյան  
ազգանունը՝ հայկական հնչերանգով,  
հայկական հնչեղությամբ:**

## ԳՐԻԳՈՐ ՏԵՐ - ՀԱԿՈՒԲՅԱՆ (ԳՐՈ)



Հոբելյան

125



**Նյարդաբանական տերմինների հայերեն  
առաջին բժշկագիտական բառարանի հեղինակը**

2012-ը բժշկական համալսարանի երախտավորներից մեկի՝ հոգեբուժության և նյարդային հիվանդությունների ամբիոնի հիմնադիր վարիչ (1930-37թթ.), մինչև 1930 թ. ՀՀ առժողովմատում մի շարք պատասխանատու պաշտոններ վարած, 1936-ին նյարդաբանական տերմինների հայերեն առաջին բժշկագիտական բառարանի հեղինակ, պրոֆեսոր Գրիգոր Աբրահամի Տեր-Հակոբյանի (Գրո) 125-ամյակի տարին էր:

1905 թ. Երևանում ավարտելով արական գիմնազիան՝ Գ. Տեր-Հակոբյանը ընդունվել է Մոսկվայի համալսարանի բնագիտության ֆակուլտետ: 1906-ին ընդունվել է Օդեսայի համալսարանի բժշկական ֆակուլտետ, որտեղ ուսանելու տարիներին մասնակցել է ցույցերի, որոնցից մեկի ժամանակ ձերբակալվել է: Բանտարկությունից հետո մեկնել է Մոսկվա, հանձնել ավարտական քննությունները և ստացել բժշկի կոչում:

Նորավարտ բժիշկը մի քանի տարի ղեկավարել է ՀՀ առժողովմատի բուժական բաժինը, իսկ 1926 թ. միաժամանակ որպես ասիստենտ աշխատել է Երևանի պետական համալսարանի բժշկական ֆակուլտետի հոգեբուժության ամբիոնում: 1930 թ. նշանակվել է Երևանի բժշկական ինստիտուտի հոգեբուժության ամբիոնի վարիչ, որտեղ աշխատել է մինչև 1937 թվականը:

Բարձր զնահատելով նրա գիտամանկավարժական գործունեությունը՝ Հայաստանի առժողովմատին կից բարձրագույն ատեստացիոն հանձնաժողովն առանց գիտական թեզի պաշտպանության բժիշկ Գրիգոր Տեր-Հակոբյանին շնորհել է գիտության թեկնածուի աստիճան և պրոֆեսորի կոչում:

Նույն տարում՝ ստալինյան հալածանքների արդյունքում ձերբակալվել է և աքսորվել Ակմոլինսկ, այնուհետև՝ Կարագանդա:

1947-ին՝ արդարացվելուց հետո վերադարձել է Երևան և նշանակվել մանկական լոգոպեդիկ կաբինետի, իսկ 1953-ին՝ փսիտոթերապիայի կաբինետի վարիչ:

Ի թիվս մի շարք աշխատությունների՝ Ա. Հ. Մելիքյանի հետ համատեղ նա կատարել է նաև «Նյարդային հիվանդություններ» դասագրքի առաջին թարգմանությունը:

# Ճանաչիր ազգային ԱՐԱՄ ԽԱՉԱՏՐՅԱՆ 110



20-րդ դարի խոշորագույն երաժիշտները մեկին՝ հայ ժողովրդի մեծաշնորհ զավակ Արամ Խաչատրյանին առանձնակի ճակատագիր վիճակվեց: Հայ մշակույթի գործիչներից նրան էր տրված հաղորդակից դարձնել ողջ մարդկությանը հարագատ ժողովրդի ինքնատիպ և վեհ ներաշխարհին:

Արամ Խաչատրյանը ծնվել է 1903 թվականի հունիսի 6-ին, Թիֆլիսում: 1913 թվականին նա ընդունվում է Թիֆլիսի Կոմերցիայի դպրոց, բայց նախընտրում է երաժշտությունը: 1929 թվականին ընդունվում է Մոսկվայի կոմսերվատորիա, որտեղ նա ուսանում է հայտնի ռուս կոմպոզիտոր և ուսուցիչ Ն. Մյասկովսկու մոտ: Ա. Խաչատրյանը ավարտում է կոմսերվատորիան փայլուն գնահատականներով և ավարտին հասցնում իր առաջին խոշոր աշխատանքը՝ «Առաջին սիմֆոնիան»: Այս ժամանակահատվածում նա գրում է երաժշտություն թատրոնի համար:

1939 թվականին Խաչատրյանը գրում է իր առաջին բալետը, որն ի սկզբանե կոչում է «Ուրախություն», հետագայում այն վերանայվում և վերանվանվում է «Գայանե»:

1956 թվականի դեկտեմբերի 27-ին բեմական կյանք ստացավ 20-րդ դարի ամենից ուշագրավ բալետային գործերից մեկը՝ Արամ Խաչատրյանի «Սպարտակը», որի առաջին բեմադրությունն իրականացրեց Լենինգրադի Կիրովի անվան օպերայի և բալետի պետական թատրոնը: Անցած տասնամյակների ընթացքում բալետը բեմադրվեց և ներկայացվեց մեր երկրի և արտասահմանյան բազմաթիվ օպերային թատրոններում, հնչեց աշխարհի բոլոր մայրցամաքների սիմֆոնիկ համերգասրահներում:

Այն մինչև օրս գտնվում է Մոսկվայի Մեծ թատրոնի ռեպերտուարում: 2012 թվականին Երևանում Մոսկվայի Մեծ թատրոնի ճանաչված բեմադրիչ Յուրի Գրիգորովիչի կողմից բեմադրվեց «Սպարտակ» բալետը: Այս շքեղ բեմականացումը պետք է նայել անպայման, թեկուզ պատկերացում կազմելու համար, թե ինչու է այն 57 տարի անընդմեջ ներկայացվում Մոսկվայի Մեծ թատրոնի բեմում: Արամ Խաչատրյանը մեծ ներդրում է ունեցել հայկական կոմպոզիտորական դպրոցի զարգացման գործում: Կոմպոզիտորի համար իսկական հայտնություն էր դիրիժորական գործունեությունը, ինչն ունկնդրի հետ անմիջական շփման, ստեղծագործության ներգործության արձագանքն զգալու անփոխարինելի միջոց էր: Արամ Խաչատրյանը վախճանվեց 1978 թ. մայիսի 1-ին՝ երկարատև, ծանր հիվանդությունից: Մոսկվայի կոմսերվատորիայի մեծ դահլիճում սգո հանդիսավոր արարողությունից հետո կոմպոզիտորի աճյունը տեղափոխվեց Երևան՝ ի կատարումն նրա վերջին ցանկության և հողին հանձնվեց Կոմիտասի անվան պանթեոնում:

## ՆՐԱ ԴՎԱՍՆԱՆՔԸ

Հայրենիքը սիրել՝ կնշանակի ոչ միայն մտածել նրա մասին, բարգավաճում ցանկանալ նրան, այլև ակտիվորեն սիրել, օգնել հայրենիքին և՛ խոսքով, և՛ ստեղծագործաբար:

\* \* \*

Չի կարելի մոռանալ, որ ազգային ոգին, ազգային բույրը սրբության սրբոց է, պետք է միշտ հիշել, թե ինչ արյուն է հոսում երակներովդ:

\* \* \*

Գրել երաժշտություն ժողովրդի մասին, ժողովրդի համար. ահա բարձրագույն նպատակը յուրաքանչյուր կոմպոզիտորի:

\* \* \*

Ժողովրդի ստեղծագործական հանճարը կերտում է արվեստի մեծագույն արժեքներ, որոնք դարեդար պահպանում են իրենց ամանց նշանակությունը, գեղարվեստական անկրկնելի բույրը:

\* \* \*

Մեծագույն երջանկությունն ստեղծագործելն է՝ իմանալով, որ քո աշխատանքը պետք է մարդկանց:

## ՕՏԱՐՆԵՐԸ ԱՐԱՄ ԽԱՉԱՏՐՅԱՆԻ ՄԱՍԻՆ

Ձեր երաժշտությամբ ես ճանաչեցի Հայաստանը, այն պետք է որ աշխարհի ամենագեղեցիկ երկրներից մեկը լինի: Իմ ողջույնը տարեք ձեր երկրին:

**ԷՈՆԵՍՏ ՀԵՄԻՆԳՈՒԵՅ**

Արամ Խաչատրյանի «Սպարտակը» խորհրդային և համաշխարհային երաժշտության մեծ հաղթանակն է:

**ԳԵՈՐԳԻ ՍՎԻՐԻԴՊԿ**

Անցած տասնամյակներում Արամ Խաչատրյանը համաշխարհային երաժշտությունը հարստացրեց շատ ժանրերի հոյակապ ստեղծագործություններով... Խաչատրյանի յուրաքանչյուր նոր ստեղծագործություն դարձել է տոն...

**ԴՄԻՏՐԻ ՇՈՍՏԱԿՈՎԻՉ**

«Գայանե» բալետում, Լերմոնտովի «Դիմակահանդես» դրամայի երաժշտության, «Վալենսիայի այրին» սյուիտի մեջ, «Սպարտակ» բալետում և ամենուրեք Ա. Խաչատրյանը ցայտուն կերպով ազգային է:

**ԴՎԿԻԴ ՕՅՍՏՐՈՒՆ**

# հոգևոր արժեքների ՄԻՆԱՍ ԱՎԵՏԻՍՅԱՆ

85



Հայ նշանավոր գեղանկարիչ Մինաս Ավետիսյանը ծնվել է 1928 թվականի հուլիսի 20-ին, Ջաջուռում: Համեմատաբար ուշ է սկսել զբաղվել գեղանկարչությամբ: Պատանի հասակում տարված է եղել Մարտիրոս Սարյանի արվեստով: Մինասի գեղարվեստական և էսթետական զարգացման գործում մեծ ազդեցություն են ունեցել հայկական մանրանկարչությունը և իտալական Վերածննդի նկարչությունը, որի հետ ծանոթացել է Լենինգրադում ուսանելու տարիներին:

Մինասը ստեղծել է հայկական գյուղաշխարհն արտացոլող կոմպոզիցիաներ, բնանկարներ, ինչպես նաև՝ դիմանկարներ, նատյուրմորտներ, որմնանկարներ: Մինասի ստեղծագործությունները յուրահատուկ են իրենց գունային ուժեղ հակադրություններով, որոնք արտահայտում են լուսավոր, քնարական տրամադրություններ, երբեմն՝ ողբերգական շեշտերով: Անդրադարձել է նկարչության բոլոր ոլորտներին՝ գեղանկարչություն, գրաֆիկա, որմնանկարչություն, բեմանկարչություն և այլն: Մինասի նկարները հայտնի են իրենց գունային կտրուկ հակադրություններով: Հայտնի նկարներից մի քանիսը վերաբերում են հայ ժողովրդի անցյալին՝ հատկապես 1915 թ. հայկական ջարդերին, որոնցից մազապուրծ են եղել նաև նկարչի ծնողները: Այդ ժամանակաշրջանին են պատկանում «Ճանապարհ՝ ծնող-

ներիս հիշողությունները», «Դեր-Ջորի ճանապարհին» կտավները: Մինասի հասուն ստեղծագործական կյանքը տևել է 15 տարի՝ 1960-1975 թթ., որի ընթացքում նկարիչը ստեղծել է մոտ հինգ հարյուր մեծ ու փոքր կտավներ, որմնանկարներ, բալետային ու թատերական ձևավորումներ:

1972 թ. հունվարի 1-ին, աղետալի հրդեհի պատճառով այրվում են Մինասի արվեստանոցում գտնվող բոլոր կտավները: Ու նա ստիպված եղավ հետագայում ավելի շատ նկարել: 1975-ի փետրվարի 16-ին Մինասը Երևանում ենթարկվում է ավտովթարի և վախճանվում է մեկ շաբաթ անց:

Ի դեպ՝ Մինասի մահը առեղծվածային էր, որի մանրամասները հայտնի չեն մինչ օրս:

### Մինասի կտավներից մեկը՝ վերջին էջում:

Մինաս, ես քեզնից մեծ եմ հիսուն տարով: Ափսոս, ինձ քիչ ժամանակ է մնացել: Ո՞ւր էիր, մի քիչ շուտ գայիր: Չմոռանաս, արվեստը պայքար է սիրում: Հիմա ես արդեն մենակ չեմ: Դու էլ մենակ չես: Ուրեմն, շարունակե՛ք խիզախել: Ես հավատում եմ քո այդ լավ ձեռքին:

#### ՄԱՐՏԻՐՈՍ ՍԱՐՅԱՆ

Մինասի խառնվածքը ուժեղ է, վառ... Լինելով սիմֆոնիկ շնչի արվեստագետ, նա թատրոն ներխուժեց լայն ու խորը մտքերով: Նա թատերական նկարչության մեջ փոխադրեց իր հզոր սիմֆոնիզմը:

#### ԱՐԱՍ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Իբրև նկարիչ, գիտեմ և վստահ եմ, որ ամեն մի նկարիչ, կանգնելով Մինասի նկարների առջև, այնտեղ տեսնում է իր չարածի, իր չկարողացածի, իր երազածի իրագործումը: Մինասը մեր նկարչության բարձրացող աշտարակն էր, հեռուներից տեսանելի ու հեռաստաններ բացող:

#### ՀԱԿՈՒԲ ՀԱԿՈՒԲՅԱՆ

Ոչ անսեր կարենալն է մի բան, ոչ անկարող սերը, իսկ նա բարձր արտիստականության ու խոր սիրո շաղախ էր: Նրա մի կտավը մի մարդու կարող է հռչակել մեծ նկարիչ, նրա կտավները կարող են մեծ նկարիչներ հռչակել իրենց թվով մարդկանց, բայց այդ կտավներից ամենակատարյալն իսկ և ոչ էլ բոլոր կտավները միասին չեն տալիս այն ամբողջական կատարելությունը, ինչը որ ինքը Մինաս-խտացումն էր: Իր գործի և իր անհատի պատվախնդրությամբ նա իրենից կռանել էր մի մարդ, ում ստեղծած ոչ կատարելությունները նույնպես արժեք էին:

Նա անսպառ էր...

#### ՀՐԱՆՏ ՍԱԹԵՎՈՍՅԱՆ

Մինասը շատ ինքնատիպ ու տաղանդավոր նկարիչ է: Իրեն գույներուն մեջ հզոր բան մը կա, արտակարգ ուժ մը, որ շատ ժամանակակից է և շատ հայկական: Մինասի նկարներուն մեջ ուժեղ կերպով Հայաստանը կզգամ:

#### ԳԱՈՋՈՒ

**ՄԵՊՏԵՄԲԵՐԻ 1-Ը ԳԻՏԵԼԻՔԻ, ԳՐԻ  
ԵՒ ԴՊՐՈՒԹՅԱՆ ՕՐՆ Է: ԱՅՍ ԵՒ ՆՈՐ ՈՒՄՈՒՄԱՆՅԱՆ  
ՏԱՐԿԱ ԱՊԻԹՈՎ ՃԱՌՆՎՈՐՈՒՄ ԵՆՔ ԲՈՂՈՐԻՆ:**



**ՄԻՋԱԴԱՐԻ ՀԱՂԱՏԾ ԲԺՇԿԱՊԵՏ  
ՄԻՏԻԹԱՆԻ ՀԵՐԱՅՈՒ ԱՆՈՒՄ ԿՈՐԻ  
ԵՆԵՒՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ  
ՀԱՄԱՆԱՏՐԱՆԸ ՈՂԶՈՒՄՈՒՄ Է ԶԵՐ,  
ԱՊԱԶԻՆ ԿՈՒՐԱՆԵՉԻՆԵՐ**


# Ի գիտութիւն ուսանողների

Սիրելի առաջին կուրսեցի, ահա և դու բժշկական համալսարանի ուսանող ես: Ուսանողական առաջին օրը սկսվեց համալսարանի ղեկավարության, համապատասխան դեկանատների ներկայացուցիչների, դասախոսների դեկանատների հետ հանդիպմամբ, ովքեր շնորհավորեցին քեզ, բացատրություններ տվեցին համալսարանում գործող կարգի մասին, ներկայացրին իրեց պահանջները, նաև՝ քո պարտականությունները:

Համոզված եմ՝ առաջին օրը քեզ համար միանգամից անեն ինչ չընկալվեց: Վստահ եմ, որ դու հետագայում նույնպես առիթներ կունենաս դեկանատներից և ամբիոններից իմանալու քեզ հուզող բազում հարցերի պատասխանները:

Ես առաջարկում եմ իմ օգնությունը՝ հնարավորինս քեզ ներկայացնել այն հարցերի պատասխանները, որոնք չափազանց կարևոր են, որոնց դու պետք է տեղյակ լինես ուսումնառությանդ առաջին իսկ օրերից, այլապես հետագայում կարող ես բարդություններ ունենալ:

Սիրելի առաջին կուրսեցի, այս հրահանգ-որոշումներում



երբեմն փոփոխություններ են կատարվում: Նախնական ծանոթությունից հետո քեզ հուզող կնճռոտ հարցերի պատասխանները առավել մանրամասնությամբ կարող ես ճշգրտել համապատասխան դեկանատում կամ համալսարանի ուսումնամեթոդական վարչությունում:

«ԱՊԱԳԱ ԲԺԻՇԿ»

## ԲԱԿԱԼԱՎՐԻԱՏ, ՄԱԳԻՍՏՐԱՏՈՒՐԱ, ՕՐԴԻՆԱՏՈՒՐԱ...

### Ուսումնական գործընթաց

Երևանի պետական բժշկական համալսարանում գործում է ուսման երկաստիճան համակարգ՝ բակալավրիատ և մագիստրատուրա:

Բակալավրիատի ընթացքում ուսանողը ստանում է բժշկական բազային գիտելիքներ: Բակալավրիատի տևողությունը բոլոր ֆակուլտետների համար 4 տարի է:

Մագիստրատուրայի տևողությունը ընդհանուր բժշկության և ռազմաբժշկական ֆակուլտետներում 2-ական

տարի է, իսկ ստոմատոլոգիական և դեղագիտական ֆակուլտետներում՝ 1-ական տարի:

Ընդհանուր բժշկության ֆակուլտետի բակալավրիատի քառամյա ծրագրի ավարտից հետո ուսումը հնարավոր է շարունակել մագիստրատուրայում հետևյալ ուղղություններով՝ բուժական գործ և հանրային առողջություն:

Մագիստրատուրան ավարտելուց հետո կլինիկական օրդինատուրայի առաջին կուրսում իրականացվում է մեկ տարի տևողությամբ ընդհանուր ուսուցում, որից հետո անցնում են նեղ մասնագիտական ուսուցում՝ ըստ ընտրված մասնագիտության (օրինակ՝ սրտաբանություն, ակնաբուժություն և այլն):

Օրդինատուրայի տևողությունը պայմանավորված է ընտրված մասնագիտությամբ:

## Քննություններ, ստուգարքներ...

### Աջակողմյան ստուգարք

Ուսումնական կիսամյակի ավարտին, իսկ բարձր կուրսերում՝ ցիկլային պարապմունքներից հետո նշանակվում է ստուգարք: Աջակողմյան ստուգարքը՝ ուսանողի լեզվով ասած՝ կատարողականը, նշանակվում է բոլոր այն դեպքերում, երբ ուսանողը ներկա է եղել բոլոր դասերին և կատարել է ուսումնական ծրագրի բոլոր պահանջները: Աջակողմյան բոլոր ստուգարքները ստացողները թույլատրվում են քննություններին:

### Ձախակողմյան ստուգարք

Դասավանդվող մի քանի առարկաներից (դրանք նշված են դասացուցակում) ուսանողը պետք է հանձնի ստուգարքներ, դրանք նշանակվում են տեղեկագրում:

Իր նշանակությամբ այն հավասարազոր է քննության: Ձախակողմյան ստուգարքի նպատակն է ուսանողի գիտելիքների ստուգումը: Նշանակվում է այն դեպքում, երբ ուսանողն ստացել է այդ առարկայի աջակողմյան ստուգարքը, և կիսամյակի ընթացքում ունի առնվազն բավարար գնահատականներ:



# ՄՏՈՒԳԱՐՔՆԵՐԻ ԵՎ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԵՎ ՀԱՆՁՆՄԱՆ ԿԱՐԳ

## ԻՆՉ Է ՄՊԱՍԿՈՒՄ ՔԵՋ, ԵԹԵ ՈՒՆԵՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

## ՏԵՂՅԱԿ ԵՂԻՐ ՄՏՈՒԳԱՐՔՆԵՐԻ ԵՎ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԵՎ ՀԱՆՁՆՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻՆ, ՈՐ ՀԵՏՈ ՉԱՍԵՄ՝ «ՉԳԻՏԵԻ...»



Աջակողմյան ստուգարքը ստանալու համար ուսանողը պարտավոր է կիսամյակի ընթացքում մասնակցել դասախոսություններին և գործնական (սեմինարներ, լաբորատոր)

պարապմունքներին: Յուրաքանչյուր առարկային հատկացված ժամաքանակի 15% և ավելի բացակայության դեպքում ուսանողը չի կատարում ուսումնական ծրագիրը, հետևաբար զրկվում է ստուգարքներին ու քննություններին մասնակցելու իրավունքից և հեռացվում է համալսարանից:

- Յուրաքանչյուր կիսամյակի ավարտին ռեկտորի հրամանով սահմանվում են տվյալ կիսամյակում նախատեսված քննությունների և երկու մարման շրջանների հստակ ժամկետներ:
- Ուսանողին թույլատրվում է մասնակցել ստուգարքներին և քննություններին, եթե նա հանձնել է տվյալ կիսամյակի՝ ուսումնական ծրագրով նախատեսված բոլոր կատարողականները:
- Համալսարանում ստուգարքները հանձնելու ժամկետ է սահմանվում յուրաքանչյուր կիսամյակի վերջին շաբաթը՝ մինչև քննությունների մեկնարկը, իսկ բարձր կուրսերում՝ յուրաքանչյուր ցիկլային պարապմունքի վերջին օրը:
- Ստուգարք ստանալու համար ուսանողը պարտավոր է ստանալ կատարողականը՝ լրացնելով անհրաժեշտ կրեդիտները և հանձնել կիսամյակի ընթացքում նախատեսված հարցումները: Հարցումները չհանձնած ուսանողին հնարավորություն է ընձեռվում ստուգարքը հանձնել կիսամյակի վերջին շաբաթվա ընթացքում՝ ըստ ընդունված կարգի:

• Բոլոր կուրսերում դասավանդվող առարկաների հարցումները և ստուգարքները անցկացվում են նշանակված օրերին՝ գրավոր, թեստային եղանակով: Բակալավրիատում դասավանդվող բոլոր և մագիստրատուրայի միայն մասնագիտական առարկաների քննություններն անցկացվում են թեստերով՝ համակարգչային եղանակով, իսկ մագիստրատուրայի հիմնական մասնագիտական առարկաների քննությունները կազմակերպվում են բանավոր եղանակով:



յին առարկայից ուսանողը պետք է հանձնի 2 հարցում, որոնցից յուրաքանչյուրը կազմված է 50 թեստային հարցերից: Ուսանողը ստանում է ձախակողմյան ստուգարքը՝ 2 հարցումներից դրական գնահատական ստանալու դեպքում:

- Հարցման (տարբերակը բաղկացած է 50 հարցից) գնահատականը ձևավորվում է ճիշտ պատասխանած հարցերի քանակը բազմապատկելով 0.2-ով: Հարցման և կիսամյակային գնահատականները չեն ամբողջացվում: Օրինակ՝ 1-ին հարցում (46 x 0.2 = 9.2)

Վերջնական գնահատականը ձևավորվում է տարեկան (հանձնած հարցումների միջին գնահատական) և քննական գնահատականների միջինից:

**Քննություններից «անբավարար» գնահատական ստանալու դեպքում տարեկան գնահատականը հաշվի չի առնվում:**

- Ուսանողը պարտավոր է յուրաքանչյուր կիսամյակում ուսումնական պլանով նախատեսված քննությունները և ստուգարքները հանձնել համապատասխան առարկաների դասընթացներն ունկնդրելուց հետո:
- Քննությունները և ձախակողմյան ստուգարքներն անցկացվում են միայն թեստերով՝ գնահատման 10 միավորանոց համակարգով:
- Կիսամյակի ընթացքում ձախակողմյան ստուգարքա-

- 2-րդ հարցում (43 x 0.2 = 8.6)
- Գ կիսամյակ = (Գ1-ին հարցում + Գ 2-րդ հարցում) : 2
- Գ կիսամյակ = (9.2+8.6):2 = 17.8:2 = 8.9
- Քննական (տարբերակը բաղկացած է 100 հարցից) գնահատականը ձևավորվում է՝ ճիշտ պատասխանած հարցերի քանակը բազմապատկելով 0.1-ով: Օրինակ՝ 95 x 0.1 = 9.5
- Վերջնական գնահատականը ձևավորվում է կիսամյակային և քննական գնահատականների միջինացումից: Այս դեպքում արդյունքն ամբողջացվում է՝ Գ վերջնական = (Գ կիսամյակ + Գ քննական) : 2
- Օրինակ՝ Գ վերջնական = (8.9+9.5):2=9
- 50 հարցից բաղկացած քննական տարբերակների դեպքում գործում է հաշվարկի հարցումային տարբերակը:

# ՀԱՄԱԼՍԱՐԱՆՈՒՄ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԱՌԱՋԱԴԻՄՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐՈՎ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՆՊԱՍՏՆԵՐԻ ԿԱՐԳԸ



• Առաջին կուրս ընդունված ուսանողներին ուսանողական նպաստը տրվում է ընդունելության քննությունների արդյունքում առավել բարձր միավորներով ընդունված ուսանողներին՝ ՀՀ կառավարության կողմից՝ ըստ մասնագիտությունների հաստատված տեղերին համապատասխան:

- Առանց վերանայման ուսանողական նպաստի ձևով ուսման վարձի լրիվ փոխհատուցում տրվում է՝ առանց ծնողական խնամքի մնացած, 1-ին և 2-րդ խմբի հաշմանդամ, գոհված զինծառայողի երեխա ուսանողներին,

պարտադիր ժամկետային ծառայության ընթացքում հաշմանդամ դարձած և տարածքային ինքնակառավարման մարմինների կողմից նպատակային ուսուցման գործուղված ուսանողներին:

- Երկրորդ և բարձր կուրսերում ուսանողների ուսումնական տարվա առաջադիմությունը հաշվարկվում է նախքան մարման շրջանը հանձնած բոլոր քննությունների գնահատականների գումարով:
- Ստուգարքների՝ սահմանված ժամկետում պարտադիր հանձնումը:



## ՄՐՑՈՒՅԹՆ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ԿԱՐԳԸ

Մրցույթը անցկացնելու համար ստեղծվում է մանդատային հանձնաժողով, որի կազմում ընդգրկվում են համալսարանի ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտորը, ուսումնական վարչության պետը, ֆակուլտետների ղեկավարները, ուսանողական խորհուրդների նախագահները՝ ի պաշտոնե, ինչպես նաև ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմի ներկայացուցիչներ: Մրցույթն անցկացվում է յուրաքանչյուր ուսումնական տարվա վերջում:

## ՄՐՑՈՒՅԹԻ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ


Մրցույթի առաջնահերթ պայմաններն են՝ մեկ ուսումնական տարվա քննությունների արդյունքներով առավել բարձր առաջադիմություն:

Հավասար միավորների դեպքում՝ հաշվի է առնվում նախորդ ուսումնական տարվա առաջադիմությունը:

Մրցույթի լրացուցիչ պայմաններն են՝ տպագրված գիտական աշխատանքներ, կարդացված զեկուցումներ, ռեֆերատներ:

## ՈՍՏԱՑԻԱ

Ուսման վարձի փոխհատուցման նպաստի համակարգում ընդգրկվելու համար (վճարովի համակարգից անվճար համակարգ անցնելը) ուսանողը պարտավոր է ուսումնական ծրագրով սահմանված ստուգարքները և քննությունները հանձնել միայն քննաշրջանի ընթացքում: Մարման շրջաններում ստուգարքներ և քննություններ հանձնած՝ անկախ ստացած գնահատականի, ուսանողը չի մասնակցում ուսման վարձի փոխհատուցման նպաստի մրցույթին:





# ՃԱՆԱԶԻՐ ՔՈ

## ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ

### ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

- Ընտրել և ընտրվել համալսարանի (ֆակուլտետի) խորհուրդներում:
- Համալսարանական կազմակերպությունների միջոցով (ուսանողական խորհրդարան, արհմիություն և այլն) մասնակցել համալսարանի գործունեության կարևորագույն խնդիրների, ուսանողությանն առնչվող հարցերի լուծմանը:
- Անվճար օգտվել համալսարանի գրադարանի, ուսումնական, գիտական, սպորտային և մյուս ստորաբաժանումների տարածքներից, ունեցվածքից:
- Մասնակցել ուսանողական գիտական աշխատանքներին:
- Դեկանատի համաձայնությամբ՝ ուսումնական պլանի սահմաններում՝ խոսքը վերաբերում է էլեկտրոնային առարկաներին, որոշել դասավանդվող առարկաների ցանկը՝ ըստ մասնագիտությունների:
- Լրացուցիչ հաճախել համալսարանում անցկացվող ցանկացած ուսումնական պարապմունքի, հարց բարձրացնել փոխելու այն դասախոսներին, ովքեր չեն ապահովում բարձրորակ ուսումնական պարապմունքներ:

- Խորությամբ ու բազմակողմանիորեն տիրապետել ընտրած մասնագիտության տեսական գիտելիքներին, գործնական հմտություններին և հետազոտությունների ժամանակակից եղանակներին:
- Պարտադիր հաճախել դասախոսություններին և գործնական պարապմունքներին:
- Սահմանված ժամկետներում կատարել ուսումնական պլաններով և ծրագրերով նախատեսված բոլոր առաջադրանքները:
- Մշտապես ձգտել ընդհանուր մակարդակի բարձրացման, ֆիզիկական և բարոյական կատարելագործման:
- Խստորեն ենթարկվել համալսարանի ներքին կարգապահության կանոններին:
- Խնամքով վերաբերվել համալսարանի ունեցվածքին, ճիշտ օգտվել կառույցներից, սարքավորումներից, շենքերից, տնտեսել նյութական միջոցները:



## Գրադարանից և ընթերցասրահներից օգտվելու կարգը



Սիրելի ուսանողներ, մի մոռացե՛ք, որ միայն դուք չեք օգտվում դասագրքերից, այն պետք է փոխանցվի ձեզանից հետո եկողներին, ուստի աշխատեք չվնասե՛լ, չկորցնե՛լ, չպատռե՛լ՝ հակառակ դեպքում ստիպված կլինեք հատուցել:

Դասագրքերը տրվում են ուսումնական ծրագրերին համապատասխան, մինչև առարկայի ավարտը: Ժամանակին չվերադարձնելու դեպքում նոր գիրք չեք կարող ստանալ:

**Գիրքը կորցնելու կամ վնասելու դեպքում** ձեզանից կպահանջվի նույն գրքից կամ գրադարանին անհրաժեշտ համարժեք գիրք:


Կարող եք օգտվել նաև ընթերցասրահի ծառայություններից, որտեղ դասագրքերից, տեղեկատու հրատարակություններից բացի կարող եք պատվիրել լրացուցիչ գրականություն:

Ընթերցասրահում սպասարկումը կատարվում է ուսանողական տոմսերով, չի թույլատրվում գրքերը դուրս տանել:

Մի՛ մոռացե՛ք, որ ընթերցասրահում պարտավոր եք՝

- պահպանել լռություն,
- անջատել բջջային հեռախոսները,
- քննարկումներ չանցկացնել:

Ընթերցասրահը ժամադրավայր չէ:



# ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԿԱՐԳԱԴԱՅՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱԼՍԱՐԱՆՈՒՄ



Համալսարանում ուսումնական պարապմունքներն անցկացվում են դասացուցակով՝ ուսումնական ծրագրերին համաձայն: Ուսումնական դասացուցակը կազմվում է կիսամյակի համար և փակցվում է ոչ ուշ, քան յուրաքանչյուր կիսամյակի սկսվելուց տաս օր առաջ: Յուրաքանչյուր ուսումնական պարապմունքից առաջ (և պարապմունքների ընդմիջման ժամանակ) լսարաններում, լաբորատորիաներում և կաբինետներում լաբորանտներն ու ասպիրանտները նախապատրաստում են ուսումնական պիտույքներն ու սարքավորումները: Ուսումնական գործնական պարապմունքներն անցնելու համար յուրաքանչյուր կուրս բաժանվում է խմբերի:



Ամեն խմբում առավել առաջադեմ և կարգապահ ուսանողներից **դեկանի կարգադրությամբ** նշանակվում է խմբի կազմակերպիչ: Խմբի կազմակերպիչն անմիջապանորեն ենթարկվում է ֆակուլտետի դեկանին և խմբում իրագործում է վերջինիս բոլոր հրահանգներն ու ցուցումները: Հարգելի պատճառով պարապմունքներին չներկայանալու դեպքում ուսանողը պարտավոր է ոչ ուշ, քան հաջորդ օրը, տեղյակ պահել ֆակուլտետի դեկանին և ուսումնական հաստատությունը ներկայանալու առաջին իսկ օրը ներկայացնել փաստարկներ՝ պարապմունքները բաց թողնելու պատճառների մասին: Հիվանդության դեպքում ուսանողը ֆակուլտետի դեկանին ներկայացնում է սահմանված ձևի տեղեկանք՝ համապատասխան բուժական հիմնարկից: Դասախոսի լսարան մտնելու ժամանակ ուսանողները պարտավոր են ոտքի կանգնել: Ուսանողները պարտավոր են խնամքով և հոգատարությամբ վերաբերվել համալսարանի ունեցվածքին:

## ՊԱՐԳԵՎԱՏՐՈՒՄՆԵՐ

Բարձր առաջադիմության և համալսարանի հասարակական կյանքին ակտիվ մասնակցության համար սահմանվում են ուսանողների խրախուսման հետևյալ միջոցները՝

- ա) շնորհակալության հայտարարում,
- բ) անվանական կրթաթոշակի նշանակում,
- գ) պարգևատրում:

## ՏՈՒՅԺԵՐ

Ուսումնական կարգապահության, ներքին կարգ ու կանոնի խախտման դեպքում ուսանողների նկատմամբ կիրառվում են հետևյալ տույժերը՝

- ա) դիտողություն,
- բ) նկատողություն,
- գ) խիստ նկատողություն,
- դ) մասամբ կամ ամբողջապես կրթաթոշակներից զրկում՝ որոշակի ժամկետով,
- ե) վտարում:



# ԱՌԱՋԻՆ ԶԳՈՒՇԱՅՈՒՄԸ ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐԻՂ



Մեզ մոտ չեն ծխում: Մեկընդմիջտ հիշեցե՛ք՝ լսարաններում, միջանցքներում, գրադարանում, ընթերցասրահներում, հանրակացարաններում, համալսարանական կլինիկաներում ձեր ծխելը նկատվելու դեպքում կարող եք հեռացվել համալսարանից: Ճակատագրական մի դարձրեք այդ վատ սովորությունը: Առավել ևս, որ պատրաստվում եք բժիշկ դառնալ, իսկ ծխելն անհարիր է ձեր ընտրած մասնագիտությանը:

- Համալսարանում և հատկապես լսարանների մոտ արգելվում է աղմկել, բարձր խոսել, դասերի ժամանակ անհարկի անցուդարձ անել, բացել լսարանների դռները:
- Դասերի ժամանակ բջջային հեռախոսները պետք է անջատվեն: Խիստ արգելվում է դասերի ժամանակ բջջային հեռախոսով խոսել կամ այլ կերպ օգտագործել, ինչպես նաև այն դնել լսարանի տեսանելի վայրում:
- Քննությունների ընթացքում արգելվում է օգտվել բջջային հեռախոսից կամ արտաքին կապ ապահովող տեխնիկական այլ միջոցներից:



# Անվանական կրթաթոշակ

Ուսումնառության ընթացքում գերազանց առաջադիմություն, հասարակական բարձր ակտիվություն ու պատշաճ վարքագիծ ունեցող ուսանողների համար համալսարանում սահմանվում են՝

- Մխիթար Չերացու անվան՝ 3 տեղ
- Վահան Արծրունու անվան՝ 1 տեղ
- Հակոբ Հովհաննիսյանի անվան՝ 1 տեղ
- Լևոն Հովհաննիսյանի անվան՝ 1 տեղ
- Գրիգոր Արեշյանի անվան՝ 1 տեղ
- Ռուբեն Յոլյանի անվան՝ 1 տեղ
- Բարդուղիմեոս Ֆանարջյանի անվան՝ 1 տեղ
- Լևոն Օրբելու անվան՝ 1 տեղ:

Մխիթար Չերացու անվան հավակնորդ կարող են լինել բացարձակ գերազանց առաջադիմությամբ, վարկանիշային առաջին երեք տեղը զբաղեցրած ուսանողները: Կրթաթոշակի չափ սահմանել ամսական 45.000 դրամ:

Մնացած անվանական կրթաթոշակների հավակնորդ կարող են լինել բարձր առաջադիմությամբ ուսանողները՝ ելնելով տվյալ կուրսի վարկանիշային ցուցանիշերից (լավ գնահատականների քանակը չպետք է գերազանցի

3-ը): Կրթաթոշակի չափ սահմանել ամսական 30.000 դրամ:

Անվանական կրթաթոշակի հավակնորդների մրցույթի համար սահմանել հետևյալ չափորոշիչները.

- Գերազանց առաջադիմություն (քննական առարկաների գնահատականի ընդհանուր գումար),
- ամբիոնի պլանային գիտական աշխատանքների շրջանակում տպագրված գիտական աշխատանքներ,
- օտար լեզվի իմացություն (մրցույթին թույլատրվում են միայն օտար լեզվի քննությունից առնվազն լավ գնահատական ստացած ուսանողները),
- մասնակցություն առարկայական հանրապետական, միջազգային մրցույթներին, օլիմպիադաներին, ուսանողական գիտական նստաշրջաններին:
- Մասնակցություն ֆակուլտետների, համալսարանի ուսանողական, հասարակական աշխատանքներին, համապատասխան կուրսի երաշխավորությամբ մրցույթին մասնակցելու թույլտվություն:

## Դու տեղյա՞կ ես համալսարանի ուսանողների ներքին կարգապահական և ուսուցման ընդհանուր կանոններին: Եթե ոչ՝ մենք կօգնենք քեզ

Համալսարանի և ուսանողի միջև հարաբերությունները կարգավորվում են օրենսդրության համաձայն կնքված պայմանագրով: Ֆակուլտետների դեկանատները և բաժինները, մինչև ուսանողի հետ պայմանագրի կնքումը, ծանոթացնում են գործող կանոնակարգին, համալսարանի այլ կանոններին, ինչպես նաև օրենսդրությամբ սահմանված ուսման տարեկան վարձի մասամբ կամ լրիվ փոխհատուցման կարգին, ինչպես նաև ուսանողի իրավունքներին և պարտականություններին:



### Ներկա, բացակա, ուշացում...

Ուսուցման կանոնների նկատմամբ անմիջական վերահսկողություն իրականացնում են ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտորը, ֆակուլտետների դեկանները և բաժնի պետերը:

Ուսանողները դասերին պետք է ներկայանան սահմանված ժամանակին:

Ուշացման դեպքում ուսանողը մատյանում պետք է ստանա «բացակա»:

Դասերի ժամանակ լսարանից դուրս գալ ուսանողը կարող է միայն դասախոսի թույլտվությամբ:

Ուսանողի բացակայությունները համարվում են հարգելի, եթե ներկայացվում են համապատասխան փաստաթղթեր:

Ուսանողները դասերին հաճախում են բժշկական համազգեստով:



# Ցանկանում ես կրթաթոշակ ստանալ, ուրեմն՝ ինձացիր...



## Գիտե՞ս, ի՞նչ է նշանակում ռոտացիա

Առաջին կուրս ընդունված ուսանողի նպաստի ձևով ուսման վճարի լրիվ փոխհատուցում տրվում է ՀՀ պետական բուհերի ընդունելության կանոններով սահմանված կարգով համալսարան ընդունված ուսանողներին: Հաջորդ կուրսերում ուսանողական նպաստի ձևով ուսման վճարի լրիվ փոխհատուցում տրվում է մեկ ուսումնական տարվա քննությունների և ստուգարքների արդյունքներով առավել բարձր առաջադիմություն ունեցող ուսանողներին՝ մրցութային հիմունքներով: Պետության կողմից տրվող ուսման վճարի լրիվ փոխհատուցման նպաստների քանակը սահմանվում է ՀՀ Կառավարության կողմից, որը տեղափոխվում է կուրսից կուրս:

Ուսանողներին պետական կրթաթոշակ է տրվում գերազանց և լավ առաջադիմության, հասարակական ակտիվության, պատշաճ վարքագիծ դրսևորելու համար: Պետական կրթաթոշակի տրման կարգը և չափը սահմանում է ՀՀ Կառավարությունը:

## Ինձացիր նաև, որ...

Ուսանողը կուրսից կուրս տեղափոխվում է ուսումնական ծրագիրն ամբողջովին կատարելուց և քննական բոլոր առաջադրանքները «Քննաշրջանում կատարողականների անցկացման ու հանձնման կարգին» համապատասխան հանձնելուց հետո՝ ռեկտորի հրամանի հիման վրա:



Ուսանողը, համալսարանի հետ պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետում, մուծում է ուսման վարձը: Հակառակ դեպքում համալսարանը իրավասու է ուսանողին հեռացնել համալսարանից: Ուսանողի կողմից համալսարանի հետ պայմանագիրը միակողմանի լուծարելու կամ ուսանողին հեռացնելու դեպքում ուսումնական տարվա առաջին կիսամյակում լուծարվելու դեպքում այդ կիսամյակի ուսման վարձը չի վերադարձվում:

Օտարերկրյա ուսանողի կողմից պայմանագիրը միակողմանի լուծարելու կամ ուսանողին հեռացնելու դեպքում տվյալ ուսումնական տարվա վճարված ուսման վարձը չի վերադարձվում:

Որպես բացառություն ուսման վարձը կարող է վերադարձվել ուսանողի առողջական վիճակի պատճառով՝ ուսումն ընդհատվելու դեպքում: Այդ դեպքում վերադարձման ենթակա գումարը պետք է համապատասխանի ուսուցում չանցած ժամանակին, որը սկսվում է հրամանով ազատվելուց հետո, հաջորդող ամսվա 1-ից:

Համալսարանի դասախոսները ուսանողների նկատմամբ դրսևորում են օբյեկտիվ, հարգալից, ուշադիր և բարեկիրթ մանկավարժական վերաբերմունք:

Ուսանողները համալսարանի դասախոսների և այլ աշխատողների նկատմամբ ցուցաբերում են հարգալից վերաբերմունք, ճշտապահություն ու հանդուրժողականություն, ինչպես նաև քաղաքավարի վարքագիծ:



**Այս կանոնների շրջանցումը դիտվում է որպես կարգապահական կանոնների կոպիտ խախտում:**



### Ի գիտություն

Համալսարանի անունից այլ կազմակերպություններում և արտերկրում հանդես գալու դեպքում սովորողները այդ մասին նախօրոք տեղեկացնում են համալսարանի համապատասխան ֆակուլտետի ղեկավարին կամ բաժնին: Բացի այդ նրանք պարտավոր են ամենուրեք ցուցաբերել պատշաճ վարքագիծ՝ բարձր պահելով համալսարանի վարկանիշը:

Համալսարանի աշխատողները և ուսանողները բարեխիղճ օգտագործում և պահպանում են համալսարանի գույքը, սարքավորումները և այլ ունեցվածքը՝ իրենց բոլոր պատկանելիքներով, հատուցում են իրենց մեղքով պատճառած վնասները:

Անվտանգության բաժնի աշխատողներն իրավունք ունեն ուսանողներից և աշխատողներից պահանջելու պահպանել համալսարանի անվտանգության կանոնները, անհրաժեշտության դեպքում ստուգելու աշխատողների վկայականները և ուսանողների ուսանողական տոմսերը:

Համալսարանի տարածքում ուսանողները պարտավոր են ունենալ ուսանողական տոմս: Ժամը 16.00-ից

### Հանրակացարան

Անհրաժեշտության դեպքում համալսարանը ուսանողին տրամադրում է հանրակացարան: Հանրակացարանում բնակվելու պայմանները սահմանվում են համապատասխան պայմանագրով:

Ուսանողի կողմից հանրակացարանում բնակվելու մասին պայմանագիրը միակողմանի լուծարելու և ուսանողի՝ համալսարանից կամ հանրակացարանից հեռացնելու դեպքում տվյալ ուսումնական տարվա վճարված բնակության վարձը չի վերադարձվում, բացառությամբ առողջական վիճակի պատճառով ուսումն ընդհատվելու դեպքի:



### Համալսարանի ուսանողները և աշխատողները պարտավոր են ենթարկվել համալսարանի անվտանգության կանոններին

հետո մուտքը համալսարան թույլատրվում է միայն ուսանողական տոմսի ներկայացման դեպքում:

Համալսարանի ուսանողները և աշխատողները պարտավոր են ենթարկվել համալսարանի անվտանգության կանոններին, անվտանգությունից թելադրվող դեպքերում ենթարկվել անվտանգության աշխատողների ցուցումներին, աշխատանքային օրվա ավարտից հետո և աշխատանքային օրվա ընթացքում սենյակից կամ լսարանից ժամանակավոր բացակայելու դեպքում անջատել լամպերը և մյուս էլեկտրասարքերը, փակել պատուհանները և կողպել, ծանոթանալ համալսարանի անվտանգության կանոններին:

Ոչ աշխատանքային օրերին մուտքը համալսարան արգելվում է:

## Այս մասին մենք քեզ տեղեկացրել ենք նաև նախորդ համարում: Զգուշացիր՝ ծխելու պատճառով չհեռացվես Իմացիր նաև...

Համալսարանի տարածքում արգելվում է ծխել:

Արգելվում է համալսարանում օգտագործել ոգելից խմիչքներ, բացառությամբ համալսարանի ղեկավարության կողմից միջոցառումների համար նախատեսված դեպքերի: Կարգապահական կանոնների կոպիտ խախտում է ոգելից խմիչքների, թմրամիջոցների կամ հոգեներգործող նյութերի ազդեցությամբ համալսարանում գտնվելը:

Սույն կանոնակարգով սահմանված կարգապահական կանոնները խախտելու դեպքերը, ինչպես նաև համալսարանում այն գործողությունները, որոնք զուգորդվում են հակաիրավական արարքներով, պետք է կանխվեն համապատասխան կառուցվածքային ստորաբաժանման կողմից, և մեղավորները ենթակա են պատասխանատվության:

Օրենսդրությամբ, համալսարանի կանոնադրությամբ և ներքին կարգապահական կանոններով սահմանված պարտականությունները չկատարելու կամ խախտելու

դեպքում աշխատողի և ուսանողի նկատմամբ կարող են կիրառվել կարգապահական պատասխանատվության միջոցներ՝ դիտողություն, նկատողություն, խիստ նկատողություն, համալսարանից հեռացում:



# ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՀԵՌԱՅՄԱՆ ԵՎ ՎԵՐԱԿԱՆԳԵՄԱՆ ԿԱՐԳԸ

Յուրաքանչյուր կիսամյակի համար մարման վերջնական ժամկետ է սահմանվում հաջորդ կիսամյակի 3-րդ շաբաթվա վերջը:

Նույն առարկայից «չստուգված» կամ «անբավարար» գնահատական ստացած ուսանողն այն կարող է վերահանձնել **միայն երկու անգամ**:

- Ստուգարքների և քննությունների ակադեմիական պարտքերի մարման յուրաքանչյուր շրջանի արդյունքներով ուսանողը հեռացվում է համալսարանից՝ ա) սահմանված ժամկետում ակադեմիական պարտքը չմարելու պատճառով, բ) արտադրական պրակտիկայի ծրագիրը չկատարելու դեպքում, եթե արդեն ունի «անբավարար» գնահատական, և դրա կրեդիտը պրակտիկայի կրեդիտի հետ միասին անցնում է 12-ը:

- Ուսումնական պլանների փոփոխության պատճառով առաջացած առարկայական տարբերությունները ուսանողը պետք է հանձնի ռեկտորի հրամանով հաստատված անհատական ժամանակացույցով, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ կիսամյակի քննաշրջանի սկիզբը:
- Վերականգնվող ուսանողն ազատվում է նախկինում ուսումնասիրած և համապատասխան կրեդիտներ հավաքած առանձին առարկաների ուսումնական պարապմունքներից և ատեստավորումից: Ուսանողը պարտավոր է վճարել միայն այն առարկաների ուսումնական պարապմունքների համար, որոնց հաճախելու է՝ ըստ բուհում մասնագիտության համար գործող մեկ կրեդիտի արժեքի:

## ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՀԵՌԱՅՈՒՄ (ԱԶԱՏՈՒՄ)

### • Ուսանողը կարող է ազատվել համալսարանից՝

- ա) իր դիմումի համաձայն,
- բ) այլ բուհ տեղափոխվելու կապակցությամբ:

### • Ուսանողը կարող է հեռացվել համալսարանից՝

- ա) ուսման վարձը սահմանված ժամկետում չվճարելու պատճառով,
- բ) անբավարար ակադեմիական առաջադիմության պատճառով,
- գ) մեծաթիվ անհարգելի բացակայությունների դեպքում,
- դ) համալսարանի ներքին կարգապահական կանոնները խախտելու դեպքում:

- Բուհից ուսանողի ազատման հրամանն իր դիմումի համաձայն չի կարող տրվել, եթե նա ենթակա է հեռացման:

### • Ուսանողի ուսումնառությունը դադարեցվում է՝

- ա) զինվորական ծառայության անցնելու կապակցությամբ՝ զորացրվելուց հետո ուսանողական իրավունքների վերաբերյալ վերականգնման իրավունքով,

- բ) առողջական վիճակի պատճառով՝ բժշկափորձագիտական հանձնաժողովի եզրակացության հիման վրա ակադեմիական արձակուրդի ձևակերպմամբ, որն ավարտելուց հետո ուսանողը կարող է շարունակել ուսումը,

- գ) հղիության և ծննդաբերության, ինչպես նաև մինչև 3 տարեկան երեխայի խնամքի դեպքում:

- Բուհից հեռացման հրամանները տրվում են քննաշրջանի ակադեմիական պարտքերի մարման արդյունքներն ամփոփելուց հետո՝ 5 աշխատանքային օրվա ընթացքում, որի մասին ուսանողը նախապես տեղեկացվում է:

- Բուհից հեռացվելու (ազատվելու) դեպքում ուսանողի դիմումի համաձայն 3 աշխատանքային օրվա ըն-

թացքում նրան տրվում է հեռացման (ազատման) հրամանի պատճենը, ակադեմիական տեղեկանքը և միջնակարգ կրթության կամ միջին մասնագիտական կրթության ավարտական վկայականը: Բուհի կողմից հաստատված ավարտական վկայականի պատճենը պահվում է ուսանողի գործում:

- Ընթացիկ «անբավարար» առաջադիմություն ցուցաբերած ուսանողներին, բացառությամբ պարտադիր զինվորական ծառայությունից տարկետման իրավունքով ընդունված ուսանողների, իրավունք է վերապահվում մինչև ավարտական ուսումնական տարվա սկիզբը լրացնել առավելագույնը 12 կրեդիտ կազմող ակադեմիական պարտքերը՝ վերահանձնելով առարկաները՝ ևս 2 անգամ կրկնելով դրանք:

- Ուսումնառությունն ընդհատած ուսանողները շարունակում են ուսանողական իրավունքները մինչև ուսումնառության ընդհատումը՝ ունեցած կարգավիճակը պահպանելով:

- Համալսարանից հեռացված (ազատված) արական սեռի ուսանողների վերաբերյալ հրամանները եռօրյա ժամկետում ներկայացվում են զինկոմիսարիատներ:

- Համալսարանից հեռացման հրամանները ձևակերպվում են ընթացիկ և եզրափակիչ ատեստավորումների, ստուգարքները հանձնելու, քննական և ակադեմիական պարտքերի մարման շրջանները ավարտելուց հետո, յոթօրյա ժամկետում: Հրամանը տալու մասին ուսանողին տեղեկացնելը պարտադիր է, բացառությամբ անհարգելի պատճառով բացակայության առկայության, որը հրամանի ձևակերպման գործընթացի կասեցման հիմք չէ:



# ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄ

- Ուսանողական իրավունքների վերականգնումը թույլատրվում է՝ սկսած առաջին կուրսի երկրորդ կիսամյակից:
- Ուսանողական իրավունքները վերականգնելու դիմումները ներկայացվում են կիսամյակների ուսումնական պարապմունքներից նախորդող և հաջորդող երկու շաբաթների ընթացքում:
- Բուհից հեռացված (ազատված) ուսանողները վերականգնվում են բուհի ռեկտորի հրամանով:
- Բուհը քննարկում է ուսանողի վերականգնման դիմումը և որոշում նրա ուսումնառության կուրսը և մյուս պայմանները կամ հիմնավորում է մերժելու մասին իր որոշումը:
- Արտասահմանցի ուսանողներին վերականգնելիս հաշվի են առնվում ուսանողի կարգավիճակի առանձնահատկությունները:
- Առարկայական տարբերությունները և ակադեմիական պարտքերը հանձնելուց հետո կցագրման հրամանը փոխարինվում է ուսանողի հրամանագրումով:
- Ջորակոչվելու կապակցությամբ և առողջական վիճակի պատճառով ակադեմիական արձակուրդ ձևակերպած ուսումնառությունը ընդհատած ուսանողները ուսումնառությունը շարունակում են այն պահից, որից ընդհատել են՝ անկախ ծրագրային տարբերությունների:
- Վճարովի համակարգում ուսանողների հրամանագրումը կատարվում է ուսման վարձը վճարելուց հետո:
- Բուհից հեռացված (ազատված) ուսանողները վերականգնվում են այն կիսամյակում, որից նրանք հեռացել (ազատվել) են, եթե վերականգնման պահին առարկայական անհամապատասխանություններով պայմանավորված կրեդիտների գումարային քանակը չի գերազանցում 20 կրեդիտը: 20 կրեդիտը գերազանցելու դեպքում ուսանողին առաջարկվում է վերականգնվել նախորդ կիսամյակ, որի համար առարկայական անհամապատասխանությունների սույն կետում նշված պահանջը բավարարվում է, բացառությամբ առաջին կիսամյակի:
- Բուհից հեռացված ուսանողները վերականգնում են իրենց ուսանողական իրավունքները առնվազն 1 կիսամյակ հետո:
- Համալսարանից հեռացված ուսանողը վերականգնվում և շարունակում է ուսումը վճարովի սկզբունքներով:
- Ուսանողի վերականգնումը թույլատրվում է երկրորդ կիսամյակից՝ կիսամյակների ուսումնական պարապմունքներից նախորդող 2 շաբաթվա ընթացքում:
- Վերականգնված ուսանողի անձնական գործում պահվում են ուսանողի դիմումը, ակադեմիական տեղեկանքը,

- ըր, վերականգնման մասին հրամանի պատճենը, բուհի հետ կնքած պայմանագիրը և միջնակարգ կամ միջին մասնագիտական կրթության ավարտական վկայականը, ուսման վարձի վճարման անդորրագիրը, եթե ուսանողը վերականգնվել է վճարովի սկզբունքով:
- Ռազմաթշկական ֆակուլտետից հեռացված և նույն ֆակուլտետում վերականգնվելու իրավունքը կորցրած նախկին կուրսանտը կարող է վերականգնվել համալսարանի որևէ ֆակուլտետում միայն վճարովի հիմունքներով՝ վճարելով նաև ռազմաթշկական ֆակուլտետում ուսանած բոլոր տարիների ուսման վարձը՝ տեղափոխված ֆակուլտետի համար սահմանված ուսման տարեկան վարձի չափով:
- Անվճար սկզբունքով ուսուցումը կարող են շարունակել հետևյալ անձինք.
  - անվճար սկզբունքով ուսումնառվող ուսանողները, ովքեր վերականգնվել են առողջական վիճակի պատճառով ձևակերպած ակադեմիական արձակուրդը ավարտելուց հետո,
  - երկկողմանի ծնողազուրկ ուսանողները,
  - 1-ին և 2-րդ կարգի հաշմանդամ ուսանողները,
  - հղի կամ մինչև 3 տարեկան երեխա ունեցող ուսանողները, ովքեր մինչև վերականգնվելը սովորել են ուսուցման անվճար համակարգում,
  - զինծառայությունից զորացրված այն ուսանողները, ովքեր մինչև զորացրվելը սովորել են ուսուցման անվճար համակարգում,
  - ՀՀ և ԼՂՀ պաշտպանության մարտերում վիրավորված ուսանողները կամ զոհված զինծառայողների և ազատամարտիկների ընտանիքի անդամները:
- Վճարովի սկզբունքով վերականգնված ուսանողներին ուսանողական կրթաթոշակ չի նշանակվում:



# ՄԱՐԿ ՍԱՂԱԹԵԼՅԱՆ

## Սեպտեմբերի 1-ը Մարկ Սաղաթելյանի ծննդյան օրն է: Այսօր նա կդառնար 42 տարեկան, ընդամենը՝ 42 տարեկան...

Չափազանց դժվար է մահախոսական գրել երիտասարդ մարդու մասին, ով այնքան անելիքներ ուներ, ում մենք սովոր էինք տեսնել հատկապես Հայաստանից դուրս մեր ամենահեղինակավոր միջոցառումները վարողի դերում, ում խոսքը դժվար էր համարել սովորական հաղորդավարի վարման տեքստ՝ նախապես կազմված միջոցառման հեղինակի կողմից՝ ինչպես լինում է սովորաբար: Հարուստ ինտելեկտը, չափազանց ընդգծուն ինքնավստահությունը, բարեկիրթ հումորի անսպառ պաշարը նրան հաղորդավարից վերածում էին արտիստի, այս բառի ամենաընդգրկուն իմաստով:

Մեկ տարի առաջ նա հանդիպեց մահվան հետ, նայեց նրա աչքերի մեջ՝ ծանր ավտովթարից հետո... Ի՞նչ էր երազում... Երազում էր իր ընկերների հետ մեծ շուքով այսօր՝ սեպտեմբերի մեկին նշել իր ծննդյան օրը, որպես վերածննդի օր:

Մասնագիտության ընտրության դիպվածը նրան Երևանի պետական բժշկական ինստիտուտ բերեց 1988 թվականին: Ուսանողական կյանքում մեծ տեղ հատկացնելով ժամանակին լայն հետաքրքրություն ներկայացնող ուրախների և հնարամիտների ակումբների մրցույթներին ակտիվ մասնակցությանը՝ կարողացավ դառնալ մեր ինստիտուտի թիմի ամենաառաջատարներից մեկը:

**KBH-ի-ի (Ուրախների և հնարամիտների ակումբ)** «ԵՐԲԻ» (Երևանի բժշկական ինստիտուտ) թիմի հաղթարշավի շունչն ու ոգին էր Մարկը, մեր Մարկը՝ Մարկ Սաղաթելյանը: Ժամանակի համար ցնցող երևույթ կարելի էր համարել Խորհրդային Միության Կենտկոմի առաջին քարտուղար Միխայիլ Գորբաչովին ծանակելը, որն այնքան սրամտությամբ ու սարկազմով իրականացրեց Մարկը: Հաջողված կատարումների թվարկումը շատ հեռուն կտանի: Ուղղակի նշենք, որ Մարկն ու բժշկականի թիմի անդամ մյուս տղաները մեր ժողովրդի համար ծանրագույն տարիների հերոսներից էին: Այդ տարիներին հերոսացման էր հավասար Հայաստանի անունը հնչեցնելը մոսկովյան տարբեր մրցելույթներում այն դեպքում, երբ արդեն ԽՍՀՄ-ի կազմալուծման գաղտնի որոշումն ստորագրածները ձև էին անում, թե Սովետական Միության թիկունքին դաշույնի հարված էր Հայաստանի վարքագի-



ծը՝ արցախյան պատերազմով: Եվ լուտանք էր, որ թափվում էր «ԽՍՀՄ-ը փլուզող» Հայաստանի վրա: Այդ ֆոնի վրա էր Մարկի գորբաչովյան կերպավորումը: Նրա համարձակության գնահատումը կարող են տալ միայն այն ժամանակների բարձրի ու ազատ խոսքի սահմանափակումների մասին պատկերացում ունեցողները:

Մարկը տարբեր առիթներով նշել է՝ **KBH**-ը խաղ չէ, այն կենսակերպ է: Հավանաբար նման որակումն էր պատճառը, որ իր հարսանյաց հանդեսին Մարկը ներկայացել էր հանդիսատեսի համար այնքան սիրելի դարձած բեմական համագգեստ-հագուստով՝ սև ֆրակով, կարմիր թիթեռնիկով ճերմակ վերնաշապիկով, լայն կարմիր գոտիով...

Հենց այդպիսին էլ Մարկը մնաց հազարավորների հիշողության մեջ: Հենց այդպիսին էլ նրան ճանապարհեցին նրա հազարավոր երկրպագուները, ում համար նա հավետ կմնա 42 տարեկան:

Երևանի բժշկական համալսարանի համար կրկնակի ցավալի էր Մարկ Սաղաթելյանի կորուստը: Մենք կորցրինք մեր անվանի և ճանաչված շրջանավարտին, ում անունը հպարտությամբ էինք տալիս:

## ԳԵՈՐԳԻ ԿՈՄԻՏԱՍԻ ՊՈՂՈՍՅԱՆ

74 տարեկանում իր մահկանացուն կնքեց Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարանի սոցիալական և անվտանգության վարչության պետ, ոստիկանության պաշտոնաթող գնդապետ Գեորգի Կոմիտասի Պողոսյանը:

Գեորգի Պողոսյանը տարիներ շարունակ ԵՊԲՀ-ում աշխատել է անվտանգության ծառայության շտաբի պետի, ռեկտորի օգնականի, վարչատնտեսական աշխատանքների գծով պրոռեկտորի, սոցիալական և անվտանգության վարչության պետի պաշտոններում:

Երկարամյա անբասիր աշխատանքի արդյունքում Գեորգի Կոմիտասի Պողոսյանը ժամանակին պարգևատրվել է «Մարտական զորակցություն»,

«Օրենքի պատվար», «Իրավակարգի ամրապնդման համար» մեդալներով:

Մեծ էր Գ. Պողոսյանի ավանդը բժշկական համալսարանում ուսանողների կարգապահության հսկողության գործում: Նրա խստապահանջության արդյունքում տարիներ շարունակ ուսանողական առօրյայում վերացել էին անկարգապահության, համալսարանի տարածքում ծխելու, երիտասարդների վիճաբանությունների դեպքերը: Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարանը խորին ափսոսանքով հրաժեշտ տվեց իր երկարամյա աշխատակցին, ում երկար կյիշեն նրան ճանաչողները:

# «ԱՊԱԳԱ ԲԺՇԿԸ» նշեց իր 55-ամյակը

Հոբելյանի առիթով ստացված շնորհավորանքների պակաս չզգացվեց: Չափազանց ջերմ էին բարեմաղթանքները, պարտավորեցնող՝ թերթից սպասելիքները: Սակայն այդ օրերի չափազանց հարուստ փոստից տպագրության համար ընտրեցինք մեր նախկին աշխատակիցների և չափազանց հավատարիմ ընթերցողների շնորհավորանքները և մեր հղումը նրանց:

Սիրելի բարեկամներ, խորին շնորհակալություն՝ ջերմ հղումների կապակցությամբ:

Հոբելյանի առիթով շնորհավորում են «ԱՊԱԳԱ ԲԺՇԿԻ» բոլոր աշխատակիցներին՝ ներկայումս աշխատող և նախկինում աշխատած: Բոլոր նրանց, ովքեր իրենց ավանդն են ունեցել մեր 55-ամյա պարբերականի ստեղծման պատվավոր գործում:

Շնորհավորանքս հասցեագրվում է նաև նրա բոլոր ընթերցողներին, հատկապես բոլոր նրանց, ովքեր իրենց արխիվներում պահպանում են թերթի այն համարները, որտեղ գրված է իրենց մասին: Իսկ այդպիսիք շատ-շատ են. վկայությունը մեր հոբելյանի առիթով մեզ ուղղված չափազանց ջերմ ու զեղում հղումները...

Այս տոնը բոլորիս տոնն է:  
ՇՆՈՐՀԱՎՈՐ...

**ՍԵՂԱ ԹՈՐՈՍՅԱՆ**

«ԱՊԱԳԱ ԲԺՇԿ» թերթի խմբագիր

Չարմացա: Գրեթե իմ հասակակիցը... 30 տարի առաջ, երբ իմ առաջին քայլերն էի անում լրագրողական արվեստի աշխարհում, այն ժամանակ էլ էր «ԱՊԱԳԱ ԲԺՇԿԸ» իմ հասակակիցը: Չգիտեի: Ինձ թվում էր, թե նա դարերի միջով անցած, իմաստուն ու ծանրաքայլ մեկն է՝ «Մշակի» կամ «Նոր դարի» չափ իմաստուն: Իմ ուսանողական կյանքի ամենավսեմ վերելքների ու ստեղծագործական հիացումների վկան ու վավերագիրն է եղել իմ մտերիմ թերթը: Ամանորի մաղթանքներում ուսանող - հեղինակների ցանկում առաջինը իմ անունն էր տպագրված լինում: Ինձ շատ է երես տվել «ԱՊԱԳԱ ԲԺՇԿԸ», բայց և միաժամանակ հանդիսացել ճաշակի ու պրոֆեսիոնալիզմի նշանող: Ես ցանկանում եմ իմ հարգանքի ու սիրո հանգանակը բերել իմ հարազատ թերթի ողջ աշխատակազմին և առաջին հերթին՝ նշտադալար խմբագրապետուհի տիկին Սեղա Թորոսյանին՝ մաղթելով ամենայն բարիք:

**ՎԱՐԴԳԵՍ ԴՎԱԹՅԱՆ**  
ԱՄՆ

Ծնունդդ շնորհավոր, իմ սիրելի թերթ: Բուսով եմ չեմ ուշացել ժամանակային գոտու տարբերության ու մնացած հարգելի պատճառներով: Սիրով միանում եմ բոլոր բարեմաղթանքներին:

**ԱՐՄԵՆՈՒՅԻ ՀՈՎԱԿԻՍՅԱՆ**  
Ֆրանսիա

Շնորհավոր ծնունդդ, մեր սիրելի «ԱՊԱԳԱ ԲԺՇԿ», մենք ուրախ ենք, որ քո սրբեղծման գործում կա նաև մեր վաստակը՝

**Կարինե Մելոյան, Լուսինե Տովակիանյան, Կարինե Մահակյան, Վարդուհի Ասատրյան, Ռուզաննա Վարդանյան, Լիանա Նասիբյան, Արամայիս Դազարյան, Գոհար Տովհաննիսյան**


Մի առիթով ասել եմ ու հիմա էլ կրկնում եմ, որ «ԱՊԱԳԱ ԲԺՇԿԻ» պարտաճանաչ ընթերցողն եմ եղել 2000-06 թթ. (տղայիս ուսումնառության շրջանում): Անժամոք ոլորտին ծանոթացել եմ շատ հետաքրքիր նյութերի շնորհիվ. շնորհակալություն ամբողջ խմբագրակազմին:  
**ԱՍՅԱ ՍԱՐԳՍՅԱՆ**  
Մոսկվա

Shnorhavor!!! Karotel em dzer nor hamarin.  
I dep asem, menq arden baliki enq spasum.  
**GURPREET SINGH**  
India

Սիրելի՛ առաջին կուրսեցի, «ԱՊԱԳԱ ԲԺՇԿԸ» քեզ համար ստեղծում է թերթի խմբագրակազմը, որի լուսանկարը կօգնի քեզ դեմքով ճանաչել խմբագրության աշխատակիցներին: (ձախից Լիլիթ Վարդանյան, Սեղա Թորոսյան (խմբագիր) Էլլա Ասմարյան, Աննա Դեմուրչյան):



# Ճանորթանանք, այսօրվանից ես նաև քո թերթն եմ



Թույլ տուր ներկայանալ՝ «ԱՊԱԳԱ ԲԺԻՇԿ»:

Անունս անգամ հստակ հուշում է, թե ով է լինելու գլխավոր ընթերցողս: Խոստանում եմ ուսանողական տարիներին քեզ հետ լինել, աշխատելով որքան հնարավոր է օգտակար լինել քեզ: Իմ էջերում կներկայացնեմ համալսարանական այն որոշումները, որոնք կկողմնորոշեն քեզ, կջանամ իմ թողարկումների հերոսներ դարձնել այնպիսիներին, ում օրինակը կարող է ոգևորել քեզ՝ որպես բժիշկ ու դեղագետ կայացման տևական ճանապարհի դի հաստիակում, որ ուսումնառության տարիներ անունն է կրում: Այսօր այդ տարիները քեզ թվում են չափազանց երկար ժամանակահատված:

Մինչդեռ, եթե հիմք ընդունենք յուրաքանչյուր տարեվերջին իմ էջերում տպագրվող մայր կրթօջախին հասցեագրված շրջանավարտների հրաժեշտի հուզումնառատ խոսքերը՝ ուսանողական տարիները ակնթարթի տևողություն ունեն: Դիմա սա անհավանական է թվում քեզ: Բայց կգա օրը, և ես այս մասին կհիշեցնեմ: Իսկ այդ օրը կլինի հուզիչ, գեղեցիկ ապրումներով, սպասելիքներով լի՝ ապագայի հանդեպ, որին արդեն այնքան մոտ ես լինելու, մեծ հավատով առկեցուն...

Բայց, սպասիր, ես մոռացա ամենակարևորը: Այս ամենի համար հարկավոր է լինելու աննշան մի մանրուք, որի մասին, ինձ թվում է՝ հիշեցում պետք չէ: Դու լավ գիտես, որ եկել ես սովորելու: Ուրեմն՝ ՍՈՎՈՐԵԼ, ՍՈՎՈՐԵԼ, ՍՈՎՈՐԵԼ...

Մաղթում եմ քեզ դառնալ այնպիսի ուսանող, ում համար համալսարանի պաշտոնաթերթի էջերում տեղ գտնվի: Հավատա, դա շատ պատվաբեր է: Դրանում կհամոզվես ինքդ, երբ ամուսնու հայտնվի ուսման գերազանցիկների, խորհրդարանականների, հասարակական ակտիվությամբ աչքի ընկածներից լավագույնների ցուցակում: Քո անձնական արխիվում երկա՞ր տարիներ պահպանելու ես իմ այն թողարկումը, որի էջերում քո մասին հոդված կլինի: Եվ ես ու դու հավերժ բարեկամներ կմնանք:

Կարծում եմ՝ ծանոթությունն ստացվեց: Մնում է սպասել իմ ու քո առաջին հանդիպմանը, որին ես սպասում եմ մեծ անհամբերությամբ՝ լաբորատոր մասնաշենքի 4-րդ հարկում՝ «ԱՊԱԳԱ ԲԺԻՇԿ» թերթի խմբագրությունում:

«ԱՊԱԳԱ ԲԺԻՇԿ»  
այսօրվանից նաև քո՝ լավագույն  
բարեկամն ու խորհրդատուն



# The students of the following countries studied and are studying in YSMU



# FOR YOU FOREIGN STUDENTS!





## Dear freshmen

**We congratulate you upon entering our University and welcome you with open arms for you to study here and feel comfortable. We wish you success and all the best and hope that you'll be able to study and be active in all your activities.**

**Below is the brief history of our University and some information that may be helpful for you. Also take into account please that our newspaper is your newspaper and we'll welcome you if you actively take part in the works of our editorial.**

YSMU was founded in 1920. The highest administrative organ is the University Council, which convenes at least twice a year. The Council makes decisions about the main activities of the University. The Rectorate of the University controls the way the decisions are realized during the intervals between the University Council sessions. The hospitals, clinics and centers are involved in the University Council of Clinics. The Rector of YSMU carries out the direct control of the University Council, the Rectorate and the Board of Clinics.

The faculties or the departments are the structures organizing the academic process. These faculties are: General Medicine, Stomatology, Pharmacy and Military medicine. After graduating from the University the students enter Internship or Residency. The main units in the academic process are the chairs, where students, interns and residents get their education. Almost all the theoretical chairs are located in the 3 blocks of the University. The Clinical Chairs are located in the University Hospital, and different hospitals and clinics of Yerevan.

The training is carried out in Armenian, Russian and English languages. Students study the theoretical and clinical disciplines according to the academic curriculum of the faculty.

The department of International Affairs, International Students' Dean's office and premedical Department organize the study of foreign students.

The educational process is carried on in the Armenian, Russian and English languages, and the medical students learn theoretical and clinical subjects according to the curriculum and the duration of the academic course of studies. The education is both paid and free of charge.

The educational process of foreign students is organized by the Department of International Relations, the Dean's

Office for Foreigners and Preparatory Department. Foreign students are provided with hostels and dormitories.

Health resorts, camps and rest homes in picturesque regions of Armenia provide adequate rest for our teaching staff and students. For foreign students a hostel is provided. It is located in the district Nor Zeytun of Yerevan, in the students' town.

The University has got a library, a reading hall which is equipped with modern technique, enables in the academic and research processes.

Various entertainments organized by the Students' Parliament, Students' Scientific Society and numerous sport and culture clubs play an undoubtedly important role in the students' life. The newspapers *Apaga Bzhishk* (Future Doctor) and *Medicus*, with sections in the Armenian, Russian and English languages are published.

Students of YSMU have an exclusive chance of acquiring various nominal scholarships. Nominees for grants are chosen based on demonstrated excellence in academics as well as proven interest and participation in both scientific and social activities.

The most prominent local students of YSMU are awarded with "Mkhitar Heratsi scholarship" (generally 2 scholarships each year), named after Mkhitar Heratsi.

Mkhitar Heratsi was the great Armenian scientist and doctor of the 12th century is the founder of Armenian classical medicine. Included in his work were the study of feverish and infectious diseases, their etiology, pathogenesis, clinic prophylactics and treatment. He also studied the anatomy of the eye, the urinary tract and many other diseases. Since 1989 Yerevan State Medical University has been named after Mkhitar Heratsi.

For their social activities and best achievements in academic life local students are also given some other nominal scholarships named after armenian well-known scientists There are also special nominal scholarships specifically rewarding the progress of the foreign students of YSMU. Those students receiving these nominal scholarships also possess privileges in the further choice of clinical specialization.

# FAREWELL PARTY OF THE INTERNATIONAL STUDENTS

On June 29th there was the graduation ceremony of the international students of Yerevan State Medical University. 101 graduates from Iran, India, the USA, the Syrian Arab Republic, Sri Lanka, the Republic of Georgia, the Russian Federation, Kazakhstan Republic, Israel, Lebanon, Iraq got their diplomas.

The event was hosted by the Indian Ambassador Suresh Babun, Consul General of Islamic Republic of Iran, Mohammad Tavafin.

YSMU Rector, professor Michael Narimanyan congratulated the students on the day. "Dear graduates, I congratulate you on this beautiful day. One of the serious and difficult period of your life is over, a period that gave you much. But your education is not finished by this. As a doctor, you must always be a life-long learner. I wish you suc-



cess during your whole life."

The graduates were also congratulated by the Dean of the International Students, Associate professor Anna Sargsyan. " Dear graduates, you have passed a long way

and you have reached your goal. You received the profession you've desired in YSMU and now when you get back to your countries, you must prove that you have received here the necessary and high quality knowledge. I want you to know, that during those 6 years, you have become one of us and now you are in the huge army of YSMU graduates. Once again I congratulate you and wish you success and all the best".

Later she represented the students who have been certified in the state final oral examination and showed good results: Spurva Nigam (Republic of India) , Renoir Rana (Republic of India), Sudip Sing Badana (Republic of India), Mr. Tahmasbi (Islamic Republic of Iran), Vahe Petrosyan (the United States), Farzin Shahrokh Zade (Islamic Republic of Iran), Arame Musakhanyan (Islamic Republic of Iran), Ani Pogossyan(the United States), Nastaran Moshanezad (Islamic Republic of Iran).

Congratulating the students on the Graduation Day, the Deputy Rector of Department of International and External Affairs Professor Y. Sahakian said. " You've reached an important point, a moment that will guide you throughout you lives. Now you will recite the Oath of Hippocrates, and hopefully you will perform it during your professional activity."

Then he invited one of our Indian students Renu Rana to read the great doctor's oath in the Armenian language, from the stage.

After the swearing ceremony the graduates Armand Tahmasbin (Islamic Republic of Iran), Durgaryan Amayak (Republic of Georgia), Parisa Habibi (Islamic Republic of Iran), Nitin Kumar Chauhane (Republic of India) spoke and thanked the management and staff of YSMU, for their warm attitude and knowledge gained during those years.

The event was held in cordial atmosphere and was over by a nice concert organized by the graduates.



